*երկու առանձին դրուագներում յիշատակւում է Մաhկանաբերդցի իշխանին: Եւ վերջապէս ըստ Սիւնեաց պատմագրի (ում վկայութիւններն անտեսելու կամ նրան չհաւատալու իրաւունք չունենք)՝ hօրեղբայրը՝ Սմբատ Օրբէլեանին hովանաւորել ու սատարել են մոնղոլ Մանգուի խաքանը եւ Արեւելքի ու Հիւսիսի ամենաhզօր իլխան Հուլաւուն, որոնք տասնեակ սահիբ դիւաններ ունէին, եւ Կայենեցի Սադունը «ի դէմիս Սահիբ Դիւան ունէր* hզօր ու ազդեցիկ պաշտպան»: *Սա, մեղմ ասած, hամոզիչ չէ: Նման hամեմատութիւնը նսեմացնում, փոքրացնում եւ ստուերում է իշխան Արծրունի Սադուն Բ.-ին: Կարծում ենք, որ իրականում «hակակշռութեան իրավիճակ» երբեք չէր կարող լինել. այդ պարագան անընդունելի է: Մաhկանաբերդցի իշխանն իր բնաւորութեամբ նման չէ Սմբատ Օրբէլեանին: Աղբիւրները չեն չեշտում վերջինիս սոցիալ-քաղաքական բարձր դիրքը, ինչից պէտք է hետեւցնել, որ նա բաւականին hամեստ, զուսպ ու hաւասարակշիռ անձնաւորութիւն է: Մինչդեռ իր ժամանակակից իշխանաւորները բնորոշւում են՝* «արքայ, արքայաշուք, բարեպաշտ, ինքնակալ» *մակդիրներով:*

*Աւարտելով մեր խօսքը՝ նշենք, որ վրացական սկզբնաղբիւրների վկայութեամբ՝ Մաhկանաբերդցի Սադուն (Բ.) Արծրունին, 1250 թ. սկզբին դառնալով Աւագեան տան վերակացու, արդէն 1268/69 թթ. մեծ ճանաչում է ունեցել «Գիւրջիստանի վիլայեթում», մոնղոլական իլխանութեան արքունիքում: Մոնղոլները նրան են վստահել նաեւ վիլայեթի թագաւորական գործերի կառավարումը:*





# ԿՈԶՄԱ ԿՐՕՆԱՒՈՐԻ «ՍԵՆԱՔՍԱՐԸ»[1] (1203 թ.)

Գէորգ Ղազարեան

*Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի Քիւրտեան հաւաքածոյի թիւ 99 Աւետարանն իր տեսակի մէջ եզակի մատեաններից է, քանի որ պատկանում է ուղղափառ (օրթոդոքս) հայերի («հայ հոռոմների») աւանդոյթին[2]: Սոյն գրչագիրը, ինչպէս երևում է յիշատակարանից, գրուել է 1203 թ. գրիչ Յովհաննէսի ձեռքով: Ստացողներն են երկու եղբայրներ՝ կրօնաւոր քահանաներ՝ միևնոյն «Կոզմա» անունով: Գրութեան վայրն անյայտ է: Ձեռագիրն առաջին անգամ նորոգուել է 1462 թ. հայ հոռոմ քահանաներ պապայ Արսէնի և պապայ Սամուէլի հոգածութեամբ, և ապա՝ ԺԷ դ.: Բացի Ճաշու ընթերցուածքներից (որոնք դասաւորուած են բիւզանդական ծիսակարգի համաձայն) և մի քանի այլ միաւորներից, Աւետարանն ընդգրկում է նաև «Սենաքսառ»[3] կոչուած միաւորը, որի «յարմարողը»՝ կազմողխմբագիրը, ստացող եղբայրներից մէկն է: Կոզմայի «Սենաքսառը» սրբոց տօների ցուցակ է, որտեղ տօները դասուած են ըստ օրերի՝ սկսած սեպտեմբերի 1-ով և աւարտած օգոստոսի 31-ով[4]: Սրբերի անուններից բացի «Սենաքսառը» նշում է նաև իւրաքանչիւր օրուայ Ճաշու ընթերցուածքները[5]: Ըստ էութեան՝ Տօնացոյց է (Ἑορτολόγιον), որն անշուշտ հետևում է բիւզանդական աւանդոյթին՝ ունենալով հանդերձ առանձնայատկութիւններ: Հետևաբար, սխալուել է Յ. Քիւրտեանը, երբ այս «Սենաքսառը» հասկացել է «Յայսմաւուրք» իմաստով, և շտապել եզրակացնելու, թէ «Կոզմայի կազմած Հայ-Հոռոմ Յայսմաւուրքը աւելի հին է՝ քան ինչ-որ ծանօթ էր ցարդ»[6]: Նմանապէս, լուսահոգի Պարոյր Մուրադեանը, որը հնարաւորութիւն չի ունեցել անձամբ տեսնելու և ուսումնասի-*

1 Մեր երախտագիտութիւնն ենք յայտնում Վենետիկի Մխիթարեան միաբանութեան նախկին աբբահայր հ. Եղիա Քիլաղբեանին և միաբան հ. Անտոն-Զաքէոս Գրիգորեանին՝ Կոզմա կրօնաւորի «Սենաքսառի» ձեռագրի լուսանկարները ուսումնասիրութեան նպատակով մեզ սիրայօժար տրամադրելու համար: Խորհրդատուութեան համար շնորհակալութիւն ենք յայտնում փիլիսոփայական գիտութիւնների թեկնածու, Երևանի Մատենադարանի աւագ գիտաշխատող տկն. Օլգա Վարդազարեանին:

2 Մատեանն առաջին անգամ հետազօտել է նոյն ինքն Յ. Քիւրտեանը (տե՛ս Յ. Քիւրտեան, «*Քիւրտեան հաւաքման թիւ 99 Աւետարանը* (Հայ-հոռոմ գրչագիր, 1203 թուականէն), Բազմավէպ, 1974, թիւ 3-4, էջ 404-410:

3 Յունարէն Συναξάριον (βιβλίον)՝ «հաւաքոյթի գիրք»: Այսպէս են կոչւում սրբախօսական ժողովածուները՝ առանձին և կամ Ծարայնոցի (Μηναίον) մէջ ամփոփուած, որոնք ընթերցւում են Առաւօտեան ժամերգութեան մէջ՝ հաւատացեալ հաւաքոյթում (Տե՛ս I. E. Καραγιαννόπουλος, Πηγαί της Βυζαντινής Ιστορίας, εκδ. «Πουρναράς», Θεσσαλονίκη (5)1987, էջ 63-64. Π. Γ. Νικολόπουλος, «Συναξάριον», ΘΗΕ (Θρησκευτική και Ηθική Εγκυκλοπαίδεια), հ. 11 (1967), 554-556. Δ. Γ. Τσάμης, Αγιολογία της Ορθόδοξης Εκκλησίας, εκδ. «Πουρναράς», Θεσσαλονίκη, 2010, էջ 32-33. Α. Παπαδόπουλος Αντώνιος, Αγιολογία, τ. Ι, Θέματα γενικά, ειδικά και Εορτολογίου, εκδ. «Πουρναράς», Θεσσαλονίκη, 1996, էջ 18-20::)

4 Նշանաւոր վարքաբան Հ. Դելէէն (1859-1941 թթ.), որը հրապարակել է Կոստանդնուպոլսի «Յայսմաւուրքը», այս տեսակի յուշարձանները անուանում է synaxarium minus (տե՛ս H. Delehaye, Propylaeum ad Acta Sanctorum, Novembris, Sunaxarium Ecclesiae Constantinopolitanae, Bruxelles, 1902, էջ V):

5 Քանի որ այստեղ «Սենաքսառը» մեզ հետաքրքրում է լոկ որպէս սրբախօսական յուշարձան, նոյն յօդուածի մէջ վերծանում ու հրապարակում ենք միայն սրբոց յիշատակութիւնները՝ զանց առնելով Ճաշու ընթերցուածքների վերաբերեալ նշումները և թողնելով դրանք հետագայի հրապարակման:

6 Քիւրտեան, նշւ. աշխատութիւն, ¿Ç 407:

*րելու այս յուշարձանը, ենթադրել է, թէ Կոզման նոր վարքերով է համալրել Յովսէփ Կոստանդնուպոլսեցու Յայսմաւուրքը (Ժ դ.)[7]: Որպեսզի Կոզմայի «Սենաքսառն» այսուհետ մատչելի լինի հայ վարքաբանական մատենագրութիւնն ուսումնասիրող մասնագէտների համար, կարևոր համարեցինք այդ արժեքաւոր բնագրի հրապարակումը՝ անհրաժեշտ ծանօթագրութիւններով հանդերձ:*

Ամիս Սեփտեմբրի

Ա Յիշատակ ս[ուր]բ հաւրն մերոյ Սիմեոնի սիւնակեցին և սրբոց .խ. կանացն ճգնաւորաց

Բ Ս[ուր]բ վկային Մամասա

Գ Ս[ուր]բ ք[ա]հ[անայ]վկային[8] Անթիմոսի

Դ Ս[ուր]բ ք[ա]հ[անայ]վկային Բաբիլա

Ե Ս[ուրբ] մարգարէին Զաքարիաի զենումն[9]

Զ Նախազաւրավարին[10] Միքայէլի և ս[ուր]բ և մեծ վկայիցն Եւտոքսիոսի և ընգերաց նորա որ ի Մելտենի

Է Սրբոց մարտիրոսացն Սոզոնտիոյ[11] և ընկերաց նոր[ա]

Ը Ծնունդ սրբուհոյ Ա[ստուա]ծածնին

Թ Սրբոց արդարոցն Յովակիմա և Աննայի ծնողացն Ա[ստուա]ծամաւրն

Ժ Սրբոց .գ. քերցն Մինոդարայ, Միտրոդորայ և Նիփոդորայ, և երկրպագութի[ւ]ն Խաչին[12]

ԺԱ Երկրպագութի[ւ]ն ս[ուր]բ Խաչին և սրբոյն Աւտոնաւմոսի

ԺԲ Երկրպագութի[ւ]ն ս[ուր]բ Խաչին և սրբոյն Ռոմիլոսի և հազար և հարիւր և .լդ. մարտիւրոսացն[13]

ԺԳ Երկրպագութի[ւ]ն ս[ուր]բ Խաչին և նաւակատեաց ս[ուր]բ Յարութեանն[14] և յիշատակ սրբոց վկայիցն Թեոդորեայ[15] և Դիդիմեա

Շաբաթ Յյառաջ (sic) քան զբարձրութի[ւն] Խաչին[16]

Կիրակէ նախ քան զբարձրութի[ւն] Խաչին

ԺԴ Բարձրութի[ւ]ն պատուական ս[ուր]բ Խաչին

Յայսմ աւուր ննջումն է ս[ուր]բ հաւրն մերոյ Յովհաննու Ոսկեբերանին[17]

(Շ)աբ[աթ] յետ բարձրութե[ան] Խաչին

Կիւրակ[է] յետ բարձրութե[ան] Խաչի: Յիշատակ սրբոյն Սիմևոնի ազգական Տ[եառ]ն և ս[ուր]բ ժողովոյն .զ.երրորդի[18]

ԺԵ Սրբոյն Ակակիոյ Մելիտինոյ եպիսկոպոսի[19] և ս[ուր]բ մարտիրոսին Նիկետա

ԺԶ Սրբոյհոյ մարտիրուհոյն[20] Եփիմիայ

ԺԷ Սրբոց մարտիրոսացն Եւլամպիոյ և Եւլամպիաաս[21]

Յայսմ աւուր ս[ուր]բ հաւրն մերոյ Սահակա Հայոց եպիսկոպոսի և Մեսրոպա վարդապետի[22]

ԺԸ Սրբոյհոյ կուսին Թեոդորայի և Եւմենիու եպիսկոպոսի Կրետա

ԺԹ Սրբոյն Տրոփիմու և ընգերաց նորա[23]

Ի Սրբոյ և մեծ մարտիրոսին Եւստաթիոյ և ընգերացն նորա

ԻԱ Ս[ուր]բ առաքելոյն Կոդրատա և յիշատակ սրբոյհոյ Ա[ստուա]ծածնին ի Վիմի[24]

ԻԲ Ս[ուր]բ ք[ա]հ[անայ]վկային Փոկասա

ԻԳ Յղութի[ւ]ն սրբոյհոյն Եղիսաբեթի զՅովհաննէս Մկրտիչ

ԻԴ Սրբոյհոյ նախավկային Թեկղայ

ԻԵ Սրբոյհոյն Եւփռոսինոյ և յիշումն շարժման[25] և սրբոց մարտիւրոսացն Պափնուտիոյ[26] և Ռոմանոսի[27]

ԻԶ Փոխադրումն սրբոյն Յոհվաննոյ Ա[ստուա]ծաբանին

ԻԷ Ս[ուր]բ մարտիրոսին Կալիստրատա և որք ընդ նմա

ԻԸ Ս[ուր]բ հաւրն մերոյ Խարիտոնի

ԻԹ Ս[ուր]բ հաւրն մերոյ Կիւրակոսի Միայնակեցի

Ս[ուր]բ հայրապետին մերոյ Գրիգորի Հայոց Մեծաց եպիսկոպոսի[28]

Ամիս Ոքտեմբրի

---

7 *Տե՛ս* **П. Мурадян**, *«Культурная деятельность армян-халкедонитов в XI-XII вв.»*/II Международный симпозиум по армянскому искусству, Ер. 1978, *էջ 326:*

8 Ἱερομάρτυς բառի տառացի թարգմանութիւնն է:

9 Յովհաննէս Մկրտչի հայր Զաքարիան, «Յակոբոսի Նախաաւետարանի» հիման վրայ ձևաւորուած աւանդութեան համաձայն, նոյնական է Տաճարի և զոհասեղանի միջև զենուած Զաքարիային (Ղուկ. 11, 51, Մատթ. 23, 35) (տե՛ս **П. Ю. Лебедев**, О. Н. А., О. В. Л. «Захария», ПЭ (Православная Энциклопедия под ред. Патриарха Кирилла), т. 19, էջ 680-681:

10 Ἀρχιστράτηγος բառի թարգմանութիւնն է:

11 Σώζων (սեռականը՝ Σώζοντος) անունն է:

12 Խաչվերացի տօնին նախորդող Խաչի երկրպագութեան քառօրեակը Կոզմայի «Սենաքսառի» առանձնայատկութիւններից մէկն է:

13 Փոքր Հայքի Մելիտենէ քաղաքում նահատակուած այս մարտիրոսների յիշատակը սեպտեմբերի 6-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Σεπτεμβρίου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. τῆς Ἀποστολικής Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, (2)2002 (այսուհետ՝ Μηναίον τοῦ Σεπτεμβρίου), էջ 109): Կարևոր ենք համարում նշել Ծարակնոցի տուեալները՝ նկատի ունենալով, որ այնտեղի ամսաթուերը վերջնականապէս ամրագրուած օրերն են: «Սենաքսառի» տօնախօսական տուեալները քննել ենք նաև Սոփրոնիոս մետրոպոլիտ Եվստրատիադիսի (1872-1947 թթ.) աշխատութեամբ, որը կազմուել է բիւզանդական Յայսմաւուրքների ձեռագրական աւանդոյթի վրայ և առ այսօր Օրթոդոքս Եկեղեցու ամենաամբողջական տօնախօսական ժողովածուն է (տե՛ս Εὐστρατιάδης Σωφρόνιος, μητροπ. Λεοντουπόλεως, Ἁγιολόγιον τῆς Ὀρθοδόξου Ἐκκλησίας, ἔκδ. τῆς Ἀποστολικής Διακονίας τῆς Ἑλλάδος, (2)2010 (այսուհետ՝ Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον)):

14 Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարի նաւակատիքի յիշատակութիւնն է (335 թ. սեպտեմբերի 13):

15 Թէոդորոս Ալեքսանդրացի վկայի յիշատակը սեպտեբերի 12-ին է, իսկ սեպտեմբերի 11-ին՝ Դիոդորոս, Դիոմիդէս և Դիդիմոս վկաների յիշատակը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 182, Μηναίον τοῦ Σεπτεμβρίου, էջ 195):

16 Խաչվերացին նախորդող շաբաթ և կիրակի օրերի համար «Սենաքսառը» տալիս է Ճաշու ընթերցուածները՝ առանց սրբոց յիշատակութեան:

17 Հենց այս օրն է ննջել Ոսկեբերանը (407 թ.), սակայն Խաչվերացի տօնի պատճառով նրա յիշատակը տեղափոխուել է նոյեմբերի 13-ին (տե՛ս Μηναίον τοῦ Σεπτεμβρίου, էջ 239):

18 Վեցերորդ տիեզերաժողովի (Կոստանդնուպոլիս, 681 թ.) յիշատակութիւնն է:

19 Ըստ Ծարակնոցի՝ այսօր նշւում է Ակակիոս Մելիտենացու նշխարների գիւտի յիշատակութիւնը (տե՛ս Μηναίον τοῦ Σεπτεμβρίου, էջ 258):

20 Յունարէնում μάρτυς բառը հաւասարապէս կիրառւում է թէ՛ արանց, թէ՛ կանանց պարագայում, մինչդեռ այստեղ հայ թարգմանիչը փորձել է կերտել իգականը:

21 Εὐλαμπίας սեռական ձևը թարգմանիչն ընկալել է որպէս ուղղական, ապա գրաբարի «այ» վերջաւորութեամբ կերտել դրա սեռականը:

22 Սբ. Սահակը ննջել է 439 թ. սեպտեմբերի 7-ին, իսկ սբ. Մաշտոցը՝ 440 թ. փետրուարի 17-ին (հմմտ. **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, 366-370):

23 Τῆς συνοδίας αὐτοῦ կապակցութեան թարգմանութեանն է: Քննուող բնագրում թարգմանուած է նաև «որք ընդ նմա» արտայայտութեամբ:

24 Կոստանդնուպոլսի Պետրա վայրում Աստվածամօր տաճարի նաւակատիքի յիշատակութիւնն է: Հայ թարգմանիչը բառացի է թարգմանել ἐν τῇ Πέτρα կապակցութիւնը:

25 Սա Պոլսի երկրաշարժի յիշատակակութիւնն է, որը տեղի է ունեցել Պրոկղ պատրիարքի օրօք (434-446 թթ.) և որի ժամանակ հրաշքով մարդկանց է տրուել Երեքսրբեանը (տե՛ս Μηναίον τοῦ Σεπτεμβρίου, էջ 375: Հմմտ. **Հ. Բարթիկեան**, *«Narratio de rebus Armeniae», յունարէն թարգմանութեամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբիւր»*, - Բանբեր մատենադարանի, 6 (1962), էջ 461): Սինաքսարներին յատուկ է պատմական դէպքերի, մասնաւորապես Պոլսում տեղի ունեցած երկրաշարժների, տաճարների նաւակատիքների յիշատակութիւնը, այնպէս որ Կոզմայի «Սենաքսառում» դրանք ևս հանդիպում են՝ վկայելով նրա պոլսեան հիմքի մասին (տե՛ս M. Ἰ. Γεδεῶν, Βυζαντινόν Ἑορτολόγιον, Κωνσταντινούπολη, 1899 (այսուհետ՝ Γεδεῶν, Βυζαντινόν Ἑορτολόγιον, էջ 15-16):

26 Եգիպտացի այս սուրբը ոչ թէ մարտիրոս է, այլ ճգնաւոր:

27 Անյայտ սուրբ է:

28 Խօսքը բնականաբար սբ. Գրիգոր Լուսաւորչի մասին է:

Ա Ս[ուր]բ առաքելոյն Անանիայի և սրբոցն Դոմնիդի և Ռամանոսի քաղցրբանի[29] և Արեթայ եպիսկոպոսի[30]

Բ Ս[ուր]բ ք[ա]հ[անայ]վկային Կիպրիանոսի և Յուստինի

Գ Ս[ուր]բ հաւրն մերոյ Դենեսիոսի Արեսբագացոյ

Դ Ս[ուր]բ ք[ա]հ[անայ]վկային Պետրոսի և Յերոթեոսի

Ե Սրբոյհոյն Խարիտինիս[31] և Մամելխթա

Զ Ս[ուր]բ առաքելոյն Թովմայի

Է Սրբոց և մեծ մարտիրոսացն Սարքսի և Բաքոսի

Ը Սրբոյհոյն Պեղեգեայ կոյս վկային Ք[րիստոս]ի

Թ Ս[ուր]բ առաքելոյն Յակոբա Աղփեն

Ժ Սրբոց Եւլամպիոյ և Եւլամպիասա[32]

ԺԱ Սրբոց պատրիարգացն Նեքտարիոյ, Ատտիկու, Ասարկի[33], Սիսինիոյ և է յիշատակ է .Ը. ս[ուր]բ. ժողովոյն[34]

ԺԲ Սրբոց մ[ա]րտ[իրո]սացն Պրովոսի, Տարախոսի և Անդրոնիկոսի

ԺԳ Սրբոց մ[ա]րտ[իրո]սացն Կարպոսի և Պապիլոսի և Տրոփիմոյ[35]

ԺԴ Սրբոց վկայիցն Գերվասիոյ և որք ընդ նմա

ԺԵ Սրբոյն Ղուկիանոսի ք[ա]հ[անայ]վկայի

ԺԶ Ս[ուր]բ մարտիւրոսին Ղոնկինու հարիւրապետի և որք ընդ նմա

ԺԷ Ս[ուր]բ մարգ[արէ]ին Յովսիէ և սրբոց մարտ[իրոսացն] Խոիսանթոսի. Լեւոնդինու, Նեոփիտիու և այլոց որ ընդ նոսա[36]

ԺԸ Ս[ուր]բ ա[ռա]քելոյն և աւետարանչին Ղուկասու

ԺԹ Ս[ր]բոց հայրանցն Իասոնոսի եպիսկ[ոպոսի]ն[37] և Ոմոդեոոյ[38] և Ամփիլոքա[39]

29 Μελφδος բառի թարգմանութիւնն է:

30 Ամենայն հաւանականութեամբ Կեսարիայի արքեպիսկոպոս Արեթասն է (Թ-Ժ դդ.), որը յայտնի է «Յովհաննու Յայտնութեան» մեկնութեամբ: Արեթասը որպէս սուրբ յայտնի չէ բիւզ. աղբիւրներում, և այդ առումով «Սենաքսարի» յիշատակումն ուշագրաւ է:

31 Χαριτίνης սեռականը ընկալուել է որպէս ուղղական կամ հայերեն սեռականի փոխարեն գործածուել է յունարէն ձևը:

32 Նոյն սրբերի տօնը «Սենաքսարն» արդէն նշել է սեպտեմբերի I7-ին (թիւրիմացաբար), մինչդեռ Ծարակնոցը նշում է հոկտեմբերի 10-ին (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. τῆς Ἀποστολικῆς Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, (3)2011 (այսուհետ՝ Μηναίον τοῦ Ὀκτωβρίου), էջ 13):

33 Կոստանդնուպոլսի պատրիարք Արսակիոսն (Արշակն) է (404-405 թթ.):

34 Եօթերորդ Տիեզերաժողովն է (Կոստանդնուպոլիս, 787 թ.), որը հաստատել է պատկերապատուութիւնը և դատապարտել պատկերամարտութիւնը:

35 Պարզ չէ, թէ ո՛ր սրբի մասին է խօսքը, քանի որ բիւզ. աղբիւրներում հոկտեմբերի 13-ին տօնուող սբ. Տրոփիմոս չկայ:

36 Բաւականին շփոթ հատուած է. Ծարակնոցը Խրիսանթոսի, նրա կնոջ Դարիայի և նրանց հետ նահատակուածների յիշատակը նշում է մարտի 19-ին, սակայն վերջիններիս մէջ չկան նշուած միւս անունները (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. τῆς Ἀποστολικῆς Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, (2)2002 (այսուհետ՝ Μηναίον τοῦ Μαρτίου), էջ 193): Այլ աղբիւրներից յայտնի է երեսուն և եօթը մարտիրոսների մի խումբ, որոնց տօնը օգոստոսի 21-ին է: Թրակացի այս մարտիրոսների մէջ կան Խրիսանթոսը և Նէոփիտոսը, բայց ոչ Լէոնդիոսը («Լեւոնդինու»): Հաւանաբար, սա էլ Դոմետիոս, Տերենտիոս և Դոմնինոս մարտիրոսների հետ նահատակուած Լէոնդիոսն (Ղեւոնդն) է, որի տօնը հոկտեմբերի 16-ին է (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 272, 318-319):

37 Հաւանաբար Դամասկոսի եպիսկոպոս Յասոնն է, որի յիշատակը տարբեր աղբիւրներ նշում են հոկտեմբերի 9/12-ին (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 209): Ἰάσωνος սեռականն ընկալուել է որպէս ուղղական:

38 «Մոդեստոս» անուան աղճատումն է: Երուսաղէմի պատրիարք Մոդեստոսի (632-634 թթ.) յիշատակը տարբեր աղբիւրներ տարբեր օրեր են նշում, այդ թւում նաև հոկտեմբերի 19-ը, սակայն ի վերջոյ հաստատուել է դեկտեմբերի 16-ը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 340):

39 Ամփիլոքիոս Իկոնիացին է, որի յիշատակը նոյեմբերի 23-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν,



և յիշատակ Յովելեայ մարգար[էի]ն

Ի Ս[ր]բոց մարտիւր[ոսացն] Արտեմոնի[40] և Կոռնելիու[41] և որք ընդ նոսա

ԻԱ Ս[ուր]բ հաւրն մերոյ Եւլարիոնի

ԻԲ Ս[ուր]բ ք[ա]հ[անայ]վկային Ավերկիոսի եպիսկ[ոպոսի] Յերապաւլիսիու եպիսկ[ոպոսի]

ԻԳ Ս[ուր]բ ա[ռա]քելոյն Յակոբա եղբաւրն Տ[եառ]ն

ԻԴ Ս[ուր]բ հայրապետ[ի]ն] Պրոկղի[42] և ս[ուր]բ մանգանցն Եփեսոսի[43]

ԻԵ Ս[ր]բոց դպրացն Մարկիանու և Մարտիրիոյ

ԻԶ Ս[ուր]բ և մեծ վկ[այի]ն] Ք[րիստոս]ի Տիմիտոիու[44] որ ի Թեսաղովնիկէ և յիշատակ շարժմանն[45]

ԻԷ Ս[ուր]բ մարտ[իրոսացն] Նեստորի, Արտեմիդորի[46], Յուարոսի[47] և որք ընդ նոսա և յայսմ աւուրտ կատարեցան ս[ուր]բ Սուքիասեանք ի Հայք ի Սուկաւլերինն[48]

ԻԸ Ս[ուր]բ մարտ[իրոսացն] Ստեփաննոսի և Պետրոսի և այլոց որք ընդ [նոսա][49] և յիշատակ Աբրահամու արդարոյն[50]

ԻԹ Ս[ուր]բ մարտիրոսացն Սաբաի և Արեթա[51] և սրբուհոյն Անաստասիա

Սրբոցն Զենովիու և Զինովիասա[52]

ԼԱ Ս[ուր]բ պատրիարգին Կոստանդինուպաւլսի Կիւրակոսի[53] և Աստերիու[54] և յիշատակ առաքելոց Ստաքիոսի և Ամպլիաս, Ուրբանոսի և որք ընդ նոսա

Ամիս Նոյէմռի

Ա Ս[ր]բոց անարծաթիցն Կաւզմաի և Դամիանոսի

Բ Ս[ր]բոց .Ե. վկայիցն Ակինդինու, Պիղասիու և ընկ[երաց]ն]

ἔκδ. τῆς Ἀποστολικῆς Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, (2)2002 (այսուհետ՝ Μηναίον τοῦ Νοεμβρίου), էջ 405):

40 Արտեմիոս մարտիրոսն է:

41 Բիւզ. աղբիւրներում յայտնի է միայն մէկ սուրբ այս անունով՝ յայտնի Կոռնելիոս Հարիւրապետը, որի յիշատակը սեպտեմբերի 13-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Σεπτεμβρίου, էջ 218):

42 Պօլսոյ նշանաւոր պատրիարքն է, որի յիշատակը Ծարակնոցը տօնում է նոյեմբերի 20-ին, սակայն այլուր հանդիպում է նաև հոկտեմբերի 24 ամսաթիւը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 404):

43 Եփեսոսի եօթը մանուկների յիշատակը Ծարակնոցը տօնում է օգոստոսի 1-ին, ինչը կրկնում է նաև Կոզմայի «Սենաքսարում»:

44 Թեսաղոնիկեցի նշանաւոր սուրբ Դիմիտրիոսն է (Դ դ.): «Տ»-ի արտաբերումը որպէս «դ» յատուկ է արևմտահայերէնին:

45 740 թ. Պոլսի աւերիչ երկրաշարժի յիշատակութիւնն է (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίο), էջ 374, Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 418):

46 Տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 59:

47 Οὔαρος անունն է, որի հայերէն տարբերակն է «Վարոս»: Այս սրբի յիշատակն ըստ Ծարակնոցի հոկտեմբերի 19-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, էջ 268), այլուր հանդիպում է նաև հոկտեմբերի 25 ամսաթիւը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 368-369):

48 Սբ. Սուքիասեանց տօնը ցոյց է տալիս «Սենաքսարի» կապը հայկական աւանդոյթի հետ:

49 Նիկոդեմոս Աթոսացու (ԺԹ դ.) կազմած «Յայսմաւուրքում» հոկտեմբերի 31-ին կայ իննը մարտիրոսների մի խումբ, որոնց մէջ է ոմն Ստեփանոս, սակայն ո՛չ Պետրոս (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 431):

50 Աբրահամ ճգնաւորի տօնը հոկտեմբերի 29-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, էջ 440):

51 Եթովպիացի Արեթաս մարտիրոսի տօնը Ծարակնոցը նշում է հոկտեմբերի 24-ին (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, էջ 334): Երուսաղէմի աւանդոյթին հետևող հայկականն և վրացականը նրա տօնը նշում են ապրիլի 20-ին, հոկտեմբերի 1/4-ին (տե՛ս С. А. Французов, О. В. Лосева, А. Ю. Никифорова, «Арефа», ПЭ (Православная Энциклопедия под ред. Патриарха Кирилла), т. 3, էջ 214-216):

52 Ζηνοβίας սեռականն ընկալուել է որպէս ուղղական:

53 Պոլսոյ Կիրիակոս պատրիարքի (509-606 թթ.) յիշատակը հոկտեմբերի 27-ին է, սակայն Պոլսոյ Յայսմաւուրքում կայ հոկտեմբերի 30-ը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 262):

54 Աստերիոս մարտիրոսի յիշատակը հոկտեմբերի 30-ին է, սակայն Պոլսոյ Յայսմաւուրքում կայ յունուարի 27 ամսաթիւը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 61):

Գ [Սրբ]ոց մարտիր[ոսացն] Ակեմփսիմա, Յուսիփա և Աիթալա և յիշատակ ս[ուր]բ և մեծ վկա[յին] Գէորգիու[55]

Դ Ս[ուր]բ հաւրն մերոյ Յովաննիկիոյ Մեծի և սրբուհոյն Թեոդիտու[56] և Կիւրինեա[57] և Մատրոնեա[58]

Ե [Սրբ]ոց մարտ[իրոսացն] Ղալաքտիոնի, Եպիստիմոնի[59] և Պոռփիռոսի և յիշատակ ատեաց որ ի փորակես[60]

Զ Ս[ուր]բ հաւրն մեր Պաւղոսի Խոստովանողի

Է [Սրբ]ոց .լգ. վկա[յից]ն որ ի Մելետենի կատար[եցան]

Ը Յիշատակ ս[ր]բ[ո]ց հրըշտակապետացն Միխաէլի և Գաբրիէլի

Թ Ս[ուր]բ վկաին Խստաֆաւոի և Յիսեա մարգ[արէին][61]

Ժ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Որեստի

ԺԱ Ս[ր]բոյն Մինասա և ընկերացն նորա

ԺԲ Ս[ուր]բ հաւրն մ[երոյ] Յոհաննու Ողորմածին և ս[ուր]բ հաւրն Նեղոսի և սրբոյն Մեղիու եպիսկոպոսին ընկ[երաց][62]

ԺԳ Ս[ուր]բ հաւրն մ[երոյ] Յոհաննու Ոսկեբերանի

ԺԴ Ս[ուր]բ առաքել[ոյն] Փիլիպպոսի և Բարեկանեդան[63] ս[ուր]բ Ծննդեանն Պահ[ոց]

ԺԵ Ս[ր]բոց վկա[յից]ն որ յԵդեսիա վկաեցին՝ Ղուրիա, Սամանա և Աբիբա

ԺԶ Ս[ուր]բ առաքել[ոյն] և աւետարանչին Մաթէոսի

ԺԷ Ս[ուր]բ հաւրն մերոյ Գրիգորի Սքանչելագործի

ԺԸ Ս[ր]բոց մարտ[իրոսացն] Պղատոնի և Ռոմանոսի

ԺԹ Ս[ր]բոցն Դասիու[64] և Նեոֆիտու[65] և ս[ուր]բ մարգարէին Աբդիու

Ի Ս[ր]բոց պատրարգացն Կոստանդինոյպաւլսոյ Մաքսիմիու, Անատալիու և Գեննադիոսի, և Բարղամոյ Ծերոյ[66] և վկային Ք[րիստոս]ի և Պրոկղի պատրիարգի[67]

55 Ասորիքի Լիւդիայ քաղաքում Սբ. Գէորգի տաճարի նաւակատիքի և այնտեղ սրբի մասունքները փոխադրելու յիշատակութիւնն է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 50):

56 Թէոդոտէ վկայուհւոյ տօնը՝ Դասիոս, Սևիրոս, Անդրոնաս և Թէոդոտոս նահատակների հետ նոյեմբերի 3-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 52):

57 Կիւրինեայ վկայուհու յիշատակը նոյեմբերի 1-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 17):

58 Մատրոնայ Պոլսեցւոյ յիշատակը նոյեմբերի 9-ն է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 153):

59 Ἐπιστήμη անուան աղաւաղուած ձևն է:

60 Յունարէնում՝ Τὰ ἐγκαίνια τοῦ Ἁγίου μάρτυρος Θεοδώρου ἐν τοῖς Φωρακίου, այսինքն՝ «Նաւակատեաց սրբոյն Թէոդորոսի որ ի Փորակին». այս յիշատակութիւնը պահպանուել է միայն Աթոսի Ստաւրոնիկիտա վանքի մի Աւետարանում, այնպէս որ Կոզմայի «Սենաքսարի» այս յիշատակը երկրորդն է (տե՛ս Γεδεῶν, Βυζαντινόν Ἑορτολόγιον, էջ 185): Այստեղ երևում է, որ թերևս Կոզման օգտագործել է աւելի հին մի բնագիր, որն արդէն վնասուած է եղել, և ինքն էլ, չհասկանալով թէ ի՛նչ հատուած է բացակայել, նոյնութեամբ արտագրել է:

61 Քրիստոփոր վկայի և Եսայի մարգարէի յիշատակը մայիսի 9-ին է: Կոզմայի շփոթը հաւանաբար առաջացել է նրանից, որ բիւզ. որոշ Յայսմաւուրքներում նոյեմբերի 9-ին կայ ոմն Քրիստոփոր նահատակի յիշատակը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 480):

62 Անյայտ սուրբ է: Պարսից եպիսկոպոս Միլեսի և նրա հետ նահատակուածների յիշատակը նոյեմբերի 10/13-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 336. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 336):

63 «Բարեկենդան» բառը ցոյց է տալիս «Սենաքսարի» կապը հայ աւանդոյթի հետ:

64 Դասիոս վկայի յիշատակը ըստ Շարակնոցի նոյեմբերի 20-ին է, սակայն այլուր հանդիպում է նաև նոյեմբերի 19-ը (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 336. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 108):

65 Անյայտ սուրբ է:

66 Սբ. Բարաղամի յիշատակը նոյեմբերի 19-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 316):

67 Պոլսի պատրիարքներ Մաքսիմոսի կամ Մաքսիմիանոսի (431-434 թթ.), Ալեքսանդրի (327-340 թթ.), Անատոլիոսի (449-458 թթ.), Գեննադիոս Ա-ի (458-471 թթ.) և Պրոկղի տօնը նոյեմբերի 20-ին բերուած է Պատմոսի թիւ 266 ձեռագրում, որը Պոլսի Ս. Սոֆիայի Ծիսարանն է (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 290-291):



ԻԱ Ս[ր]բոյհոյ Ա[ստուա]ծածնի .գ. ամաց ի սրբութի[ւ]ն սրբոցն[68]

ԻԲ Ս[ուր]բ մարտիրուհոյն Կիկիլիա և ս[ուր]բ առաք[ելոց]ն Փիլիմոնի և Արքիպեա

ԻԳ Ս[ուր]բ հայրապետացն Պետրոսի Կապետուղինոյ[69] և Գրիգորի Ակրականդացւոյ

ԻԴ Ս[ր]բուհոյ վկաին Կայտերինեա[70] և ս[ուր]բ մարտիւրոսին Մեռկուրիու[71]

ԻԵ Ս[ր]բոց հայրանցն Կղեմա պապա Հոռոմա և Պետրոսի Աղեքսանդրացիոյ[72]

ԻԶ Ս[ուր]բ առաք[ելոյ]ն Շիղա[73] և ս[ուր]բ հաւրն Ալիպոսի Սիւնակեցի

ԻԷ Ս[ուր]բ և մեծ վկա[յի]ն Ք[րիստոս]ի Յակոբա Պարսկի

ԻԸ Ս[ր]բուհոյն Իռինեարխոսի[74]

ԻԹ Ս[ուր]բ հաւրն մերոյ Թեաւդաւլէ Կիպրիացւոյ[75] և սրբոյն Ստեփաննոսի նոր վկաի[76] և սրբոց կրաւնաւորացն Պետրոսի և Աթանասիու[77]

Լ Ս[ուր]բ առաքելոյն Անդրէի

## Ամիս Դեկեմոի

Ա Ս[ուր]բ մարգարէին Նաւումա

Բ Ս[ուր]բ մարգ[արէին] Ամբակումա

Գ Ս[ուր]բ. մարգար[էին] Սոփոնիա

Դ Ս[ր]բուհոյ և կոյս վկ[ային] Ք[րիստոս]ի Վառվառա և Յուլիանէ

Ե Ս[ուր]բ հաւրն մերոյ Սավաի Մեծի

Զ Ս[ուր]բ հաւրն մերոյ Նիկաւլա

Է Ս[ուր]բ հաւրն մերոյ Ամբրոսիու

Ը Ս[ուր]բ հաւրն մերոյ Սոֆռոնիու և Պատապիու

Թ Յղութի[ւն]ն սրբուհոյն Աննաի զԱ[ստուա]ծածին

Ժ Ս[ուր]բ հաւրն մերոյ Ամփիլոքիոյ Կոնին եպիսկ[ոպոսի][78] և սրբոց մարտ[իրոսացն] Մինասա, Երմոգենի և Ենգրափոյ

ԺԱ Ս[ուր]բ հաւրն մերոյ Դանիէլի Սիւնակեցոյ

ԺԲ Ս[ուր]բ հաւրն մերոյ Սպիրիդոնի

ԺԳ Ս[ր]բոց և մեծ մարտ[իրոսացն] Եւստրատիու, Եւժենիու, Աւքսենտիու, Մարդարիու և Առեստի[79]

ԺԴ Ս[ր]բոց մարտ[իրոսացն] Թերսոնի, Լևկիոնի և ընկեր[ացն]

ԺԵ Ս[ր]բոց (sic) մարտիւր[ոսին] Ելևթերիու

ԺԶ Ս[ուր]բ մարգարէին Անգեա

ԺԷ Ս[ր]բոց երից մանգանցն որ ի հնոցին և Դանիէլի մ[ա]րգ[արէին]

68 Աստուածամօր՝ Տաճարին Ընծայման տօնն է, որը Պոլսի Յայսմաւուրքում կոչւում է «Սրբութիւն Սրբոց» (տե՛ս Γεδεών, Βυζαντινόν Εορτολόγιον, էջ 194):

69 Պետրոս Կապիտոլիացու կամ Բոստրացու յիշատակը հոկտեմբերի 4-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, էջ 54):

70 Սբ. Եկատերինէի յիշատակն ըստ Շարակնոցի նոյեմբերի 25-ին է, այլուր կայ նաև նոյեմբերի 24-ը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 18):

71 Սբ. Մերկուրիոսի յիշատակն ըստ Շարակնոցի նոյեմբերի 25-ին է, այլուր կայ նաև նոյեմբերի 26-ը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 333):

72 Կղեմէս Հռոմէացու և Պետրոս Ալեքսանդրացու տօնն ըստ Շարակնոցի նոյեմբերի 24-ին է, սակայն այլք ունեն նաև նոյեմբերի 25-ը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 252, 387):

73 Խօսքը ոչ թէ Շիղայ (Σίλας) առաքեալի, այլ Պարսից Սիլոս (Σίλος) եպիսկոպոսի մասին է (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 425):

74 Խօսքը սեբաստացի դահիճ և մարտիրոս Իրենարքոսի մասին է: Բնագիրը սխալմամբ է նրան որպէս կին ներկայացնում:

75 Կիպրացի ճգնաւոր Թէոդուլոսի յիշատակը դեկտեմբերի 3-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Δεκεμβρίου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αυτῷ ἀκολουθίαν, ἔκδ. τῆς Ἀποστολικῆς Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, [(3)]2009 (այսուհետեւ՝ Μηναίον τοῦ Δεκεμβρίου), էջ 30):

76 Սբ. Ստեփանոս Նորի և Պետրոս կրօնաւորի յիշատակը նոյեմբերի 27-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 494):

77 Անյայտ սուրբ է:

78 Ամփիլոքիոս Իկոնիացու յիշատակը նոյեմբերի 23-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 405):

79 Ὠρέστης անուան աղճատումն է:

ԺԸ Ս[ր]բոց մարտ[իրոսաց]ն Պրոմոսի և ընկ[երաց]ն[80] և ս[ուր]բ հայրն Յոհաննու Խոստովանողի արհիեպիսկոպոսի Սարդիոնի[81]

ԺԹ Ս[ր]բոց խոստովանողացն Ք[րիստոս]ի Եւգենիոսի և Մակարիոսի[82] և Տիմաւթէոսի սարկաւագի և ընկերաց

Շաբաթ նախ քան զս[ուր]բ Ծնունդն

Կիւրակէ նախ քան զս[ուր]բ Ծնունդն Ք[րիստոս]ի

Ի Ս[ուր]բ քահ[անայ] վկ[այի]ն Եղնատիոսի Ա[ստուա]ծազգեստի և նախատաւնքն Ք[րիստոս]ի Ծննդեանն

ԻԱ Ս[ր]բուհոյ վկ[այի] Յուլիանէ

ԻԲ Նախատաւն և վկաաբանութի[ւ]ն սրբուհոյն Անաստասիա: Յայսմ աւուր դոնքացք են սրբուհոյն Սոփիա[83]

ԻԳ Նախատաւն և սրբոց .ժ. մարտիւրոսացն որ ի Կրիտիս[84]

ԻԴ[85]

ԻԵ Ս[ուր]բ Ծնունդն Ք[րիստոս]ի ըստ մարմնոյ

ԻԶ Վերըստին տաւն է և ժողով ս[ուր]բ Ա[ստուա]ծածնին[86]

ԻԷ Վերըստին տաւն է և յիշատակ սրբոյն Ստեփաննոսի Նախավկ[այի]ն

Շաբաթ զկնի ս[ուր]բ Ծննդեանն

Կիւրակէ զկնի ս[ուր]բ Ծննդեանն

Յիշատակ ս[ուր]բ մարգարէին Դաւթի և Յովսեփա Խաւսեցելոյն Մարիամու Ա[ստուա]ծածնին և Յակոբա առաք[ե]լոյն] Եղբաւրն Տ[եառ]ն

ԻԸ Վերըստին տաւն է և վկաաբանութիւն .բ. եղբարցն[87] որ ի Նիկոմիդա

ԻԹ Վերըստին տաւն և յիշատակ ս[ուր]բ (հայրն Մարկեղիու)[88] մանկանցն որ ի Բեդղահեմ կոտոր[եցան]

Լ Վերըստին տաւն և յիշատակ ս[ուր]բ հայրն Մարկեղիու[89] և Ինդին ներքինու և Դոմնաի[90]

ԼԱ Վերստին տաւն է և յիշատ[ակ] սրբոյն Իռինոսի[91] և Թեմեստոկլեոյ[92]

Խնդրե[ա] ի սեպտ[եմբրի] .բ.

Ամիս Յունվարի

Ա Թլփատութի[ւ]ն Տ[եառ]ն և յիշատակ ս[ուր]բ հայրն մերոյ Վասիլիու

Բ Նախատաւն է Յայտնութե[ան] Տ-

80 Եղիա, Պրովոս (Պրոմոս) և Արիս մարտիրոսների յիշատակը դեկտեմբերի 19-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Δεκεμβρίου, էջ 353):

81 Այս սուրբն այլ աղբիւրներից յայտնի չէ: Հնարաւոր է, որ այստեղ շփոթ կայ, և խօսքը Սարդիսի եպիսկոպոս Եւթիմիոս Խոստովանողի մասին է, որի յիշատակը դեկտեմբերի 26-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Δεκεμβρίου, էջ 427):

82 Եւգենիոս և Մակարիոս վկաների տօնը փետրուարի 19-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Φεβρουαρίου, περιέχον ἅπασαν την ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. της Ἀποστολικής διακονίας τῆς Ἐκκλησίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, 1992 (այսուհետեւ՝ Μηναίον τοῦ Φεβρουαρίου), էջ 252):

83 Շարակնոցն այս պատմական իրադարձութեան յիշատակութիւնը նշում է յաջորդ օրը՝ դեկտեմբերի 22-ին (տե՛ս Μηναίον τοῦ Δεκεμβρίου, էջ 409):

84 Κρήτης սեռականը հայ թարգմանիչն ընկալել է որպէս ուղղական: Կրետէի տասը վկաների տօնը նշում է դեկտեմբերի 23-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Δεκεμβρίου, էջ 430 ):

85 Ս. Ծննդեան նախօրէին «Սենաքսառը» նշում է միայն Ճրագալոյցի Ճաշու ընթերցուածը:

86 Աստուածամօր ժողովի, աւելի ճիշտ հաւաքոյթի (յունարէն Σύναξις) տօնը նուիրուած է Սբ. Ընտանիքի Եգիպտոս փախուստին (տե՛ս Μηναίον τοῦ Δεκεμβρίου, էջ 526-527):

87 Պէտք է լինի «.բ. բիւրոցն» (Δισμυρίων), և ոչ թէ «եղբարցն»:

88 Այս սրբի յիշատակը նոյն գրչի ձեռքով, կարմիր թանաքով ջնջուած է և ապա նշուած է յաջորդ օրը:

89 Այս սրբի տօնը դեկտեմբերի 29-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Δεκεμβρίου, էջ 591-592):

90 Դոմնա և Ինդիս վկաների տօնն ըստ Շարակնոցի դեկտեմբերի 28-ին է, սակայն Պոլսոյ Յայսմաւուրքն ունի դեկտեմբերի 30 ամսաթիւը (տե՛ս Μηναίον τοῦ Δεκεμβρίου, էջ 576-577. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 118):

91 Հաւանաբար պիտի լինի «Իրինէոս»: Անյայտ սուրբ է:

92 Թեմիստոկլէս վկայի յիշատակը դեկտեմբերի 21-ին է (տե՛ս Μηναίον του Δεκεμβρίου, էջ 389):



[եառ]ն և յիշատակ ս[ուր]բ հայրապետ[ի]ն Սեղբեստրոսի Հռոմա

Գ Նախատաւն և ս[ուր]բ մարտիւր[ո]սի[ն] Գուրդիոս և Մաղաքիու մարգ[ա]րէի[ն]

Դ Նախատաւն և ս[ուր]բ հայրն Թէաւքտիստոսի և այլոց սրբոց

Շաբաթ նախ քան զՅայտնութի[ւ]ն

Կիւրակէ նախ քան զՅայտնութի[ւ]ն

Ե Երեկոյին Ճրագալոյծ է Յայտնութե[ան]ն Տ[եառ]ն

Զ Յայտնութի[ւ]ն Տ[եառ]ն

Է Վերըստին տաւն է և ժողով սրբոյն Յովաննու Մկրտ[չի]ն]

Շաբաթ յետ Յայտնութե[ան]ն[93]

Կիւրա[կէ] յետ Յայտնութե[ան]ն

Ը Վերըստին տաւն է և ս[ուր]բ հայրն Քսենոփոնտեա և ընկ[երաց][94]

Թ Վերըստին տաւն է և սրբոյն Պաւլիեքտոսի

Ժ Վերըստին տաւն է և ս[ուր]բ հայրն մերոյ Գրիգորի Նիւսացոյ

ԺԱ Վերըստին տաւն է և ս[ուր]բ հայրն Թէոդոսիու

ԺԲ Վերըստին տաւն է և սրբոյն Ստեփաննոսի տուշինոլակկոյ[95] և Մեորդեա[96]

ԺԳ Ութաւրեա վերըստին տաւն է Յայտնութե[ան] և վկայաբանութի[ւ]ն ս[ուր]բ մարտիւրոսին Եռմիլոսի և Ստրատոնիկոսի

ԺԴ Ս[ր]բոց կրաւնաւորացն որ ի Սենեա լերինն

ԺԵ Հաւրն Յոհաննու Խղացոյ[97]

ԺԶ Պատուական շխթաիցն երկրպագութի[ւ]ն Պետրոսի առաք[ելոյ]ն][98]

ԺԷ Ս[ուր]բ հայրն մ[երոյ] Անտոնի Մեծի

ԺԸ Ս[ուր]բ հայրապետացն Աթանասի, Կիւրղի Աղեքսանդրացոյ

ԺԹ Ս[ր]բոց անապատաւորացն Մակարա և Թեոդոտոյ[99]

Ի Ս[ուր]բ հայրն մերոյ Եւթիմիու Մեծի

ԻԱ Ս[ուր]բ մարտ[իրոսի]ն Նէոփիտէ և սրբուհոյն Տատիանէ[100] և ս[ուր]բ հայրն Մաքսիմիու և սրբոց մարտ[իրոսաց]ն Եւժենիու Տրապիզոնացւոյ և ընկերաց իւր

ԻԲ Ս[ուր]բ առաքել[ոյ]ն Տիմոթեա, Աղաթանկելոյ[101] և սրբուհոյն Անաստասիա[102]

ԻԳ Ս[ուր]բ քահ[անայ] մարտ[իրոսի] Աղաթանկելոյ

ԻԴ Սբուհոյն Քսենիոյ որ է աւտար[103] և ս[ուր]բ հայրն Վեկենդիու[104] և .գ. եղ-

93 Մկրտութեան տօնին յաջորդող շաբաթ և կիրակի օրերին համար «Սենաքսառը» նշում է միայն Ճաշու ընթերցուածները:

94 Սբ. Քսենոփոնի և նրա ընտանիքի յիշատակը յունուարի 26-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰανουαρίου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. τῆς Ἀποστολικής Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα· 1991 (այսուհետ՝ Μηναίον τοῦ Ἰανουαρίου), էջ 496):

95 Խինոլակկոնի վանքի (Μονὴ τοῦ Χηνολάκκου) հիմնադիր Ստեփանոսի տօնը յունուարի 14-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰανουαρίου), էջ 297): Χ-շ և γ-ժ անցումները հանդիպում են գրաբար բնագրերում:

96 Մեորտիոս վկայի յիշատակը պահպանուեալ է Պոլսոյ Յայսմաւուրքի մէջ (տե՛ս H. Delehaye, նշւ. աշխ., էջ 386):

97 Յունարէնում սուրբը կոչւում է «Καλυβίτης»՝ «καλύβα» բառից, որ գրաբար թարգմանւում է «խուղ», այսինքն՝ «հիւղակ», «խրճիթ»:

98 Պետրոս առաքեալի շղթաները պահուել Պոլսոյ Ս. Սոփիայում և ամեն տարի այս օրը հանուել են յերկրպագութիւն հաւատացեալների (տե՛ս Μηναίον τοῦ Ἰανουαρίου), էջ 322):

99 Թէոդոտ վանահօր («անապատաւոր») յիշատակը յունուարի 25-ին է, իսկ այս օրը նշւում է կիպրացի եպիսկոպոս Թէոդոտի յիշատակը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 177):

100 Տատիանէ վկայուհու տօնը յունուարի 12-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰανουαρίου, էջ 274):

101 Այս սրբի անունը գրչագիրը ջնջել է սև թանաքով և ապա գրել յաջորդ օրուայ մէջ:

102 Անաստաս Պարսիկն է, որն այստեղ թիւրաբար կին է համարւում:

103 Ξένη նշանակում է «օտար, օտարերկրացի կին»:

104 Վիկենդիոս սարկաւագի յիշատակն ըստ Պոլսոյ Յայսմաւուրքի յունուարի 22-ին է (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 81):

բարց[105]

ԻԵ Ս[ուր]բ հայրն մերոյ Գրիգորի Ա[ստուա]ծաբանի

ԻԶ Ս[ր]բոց մարտ[իրոսացն] Աստերիու և ըՆկ[երացն][106]

ԻԷ Վերադարձումն սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի[107]

ԻԸ Ս[ուր]բ հայրն մերոյ Եփրեմի Ասորոյ

ԻԹ Վերադարձումն սրբոյն Իգնատիոսի[108]

Լ Ս[ր]բոց մարտ[իրոսացն] Իպպալիտոսի և Թէոֆիլու և Թէոդուլէ[109]

ԼԱ Ս[ուր]բ սքանչելագործ վկաիցն և անարծաթ բժշկացն Կիւրոսի և Յոհաննու

Ամիս Փետրվարի

Ա Ս[ուր]բ մարտ[իրոսին] Տոփոնի

Բ Ընծայումն[110] քառասնաւրեայ ի Տաճարն

Գ Սրբոյն Սիմեոնի Ծերունոյն[111]

Դ Վերըստին տաւն է և յիշատակ Իսիդորոսի քահ[անայի] և սրբոյն Պապիրա և ընկեր[ացն][112]

105 Անյայտ սրբեր են:

106 Աստերիոս, Կլաւդիոս, Նէոն և Նէոնիլլա վկաների տօնն ըստ Ճառընտիրի հոկտեմբերի 30-ին է, այլուր կայ նաև յունուարի 27 ամսաթիւը (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, էջ 455, Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 61):

107 Ոսկեբերանի մասունքների՝ պոնտական Կոմանա քաղաքից Պոլիս տեղափոխման յիշատակութիւնն է:

108 Իգնատիոս Աստուածազգեացի նշխարների՝ հոռմից յանձնելու յիշատակութիւնն է:

109 Թէոդուլէ վկայուհու տօնը յունուարի 18-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰανουαρίου, էջ 363):

110 Տեառնընդառաջի տօնը յունարէն կոչւում է «Ὑπαπαντὴ τοῦ Κυρίου», որ նշանակում է «Հանդիպումն Տեառն»: «Ընծայումն» եզրը յատուկ չէ բիւզ. աւանդոյթին, այլ՝ հայկական միջավայրին:

111 Սիմէոնի «Ծերունի» մակդիրը ևս յատուկ չէ յունական աւանդոյթին, այլ՝ հայկական:

112 Հաւանաբար Սիցիլիայում նահատակուած Բաբիլաս քահանան և նրա երկու աշակերտներն են, որոնց յիշատակը յունուարի 24-ին է (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 68):

Ե Ս[ր]բուհոյն Աղաթէ

Զ [Սրբ]ոյն Պարթենիոսի եպիսկոպ[ոսին] Լափս[ակայ][113]

Է Ս[ր]բոյն Թորոսի[114] Ստրատելատի[115] և .ռ. .գ. մարտ[իրոսացն][116]

Ը Ս[ր]բոյն Աբրահամու Պարսկի[117] և Նաթան մարգարէի[118]

Թ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Նիկիփաւռա

Ժ Ս[ուր]բ քահ[անայ]վկ[ային] Խարալամբիու և երկուց քեոց[119]

ԺԱ Ս[ր]բոյն Վլասա

ԺԲ Ս[ր]բոյն Պլոտինու և Մելետիու և սրբուհոյն Մարիանոսի[120]

ԺԳ Ս[ուր]բ հայրն Մարտինիանէ

ԺԴ Ս[ուր]բ հայրն Աւքսենտիոսի

ԺԵ Ս[ուր]բ առաք[ելոյն] Ոնեսիմա

ԺԶ Ս[ր]բոց մարտ[իրոսացն] Պամփիղա, Պաւղոսի և ընկերաց

113 Սբ. Պարթենիոսի յիշատակը փետրուարի 7-ին է (տ՛ես Μηναίον τοῦ Φεβρουαρίου, էջ 99):

114 Յունարէն «Թէոդորոս» անուան նուազական ձևն է, որ յատուկ է հայ իրականութեանը:

115 Թէոդորոս Ստրատելատի (Զօրավարի) տօնը փետրուարի 8-ին է (տ՛ես Μηναίον τοῦ Φεβρουαρίου, էջ 117):

116 Նիկոմեդիայում Դ. դ. սկզբում նահատակուած երեք հազար քրիստոնեաներն են:

117 Պարսից Արբէլ քաղաքի եպիսկոպոս Աբրահամն է, որի յիշատակը փետրուարի 4-ին է (տ՛ես Μηναίον τοῦ Φεβρουαρίου, էջ 61):

118 Նաթան մարգարէի առանձին յիշատակը ուշագրաւ է, քանի որ բիւզ. աւանդոյթն այս մարգարէի յիշատակը նշում է միայն Փրկչի Նախահայրերի տօնին՝ Սբ. Ծննդեանը նախորդող կիրակի օրը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 68):

119 Ճառընտիրը գիտէ սբ. Խառալամբոսի հետ նահատակուած ոչ թէ երկու, այլ երեք կանանց մասին, մինչդեռ նոյն ամսուայ 8-ին նշում է Ղազարոսի քոյրերի՝ Մարթայի և Մարիամի յիշատակը (տե՛ս Μηναίον τοῦ Φεβρουαρίου, էջ 119, 154): Հաւանաբար, Կոզմայի «Սենաքսառում» այստեղ շփոթ կայ:

120 Սա այն Մարիամն է որը, թաքցնելով իր սեռը, ճգնել է արական վանքում՝ «Մարինոս» անուամբ:



ԺԷ Ս[ուր]բ և մեծ վկա Թեոդորոսի Տիրոնցոյ[121]

ԺԸ Ս[ուր]բ հայրն Լեւոնտիու պապա Հռոմա[122]

ԺԹ Ս[ր]բոց մարտ[իրոսացն] Տիմոթէա Աղեքսանդրացւոյ[123] և սրբոյն Ոզիու[124]

Ի Ս[ուր]բ հայրն Պափնոտիու[125] և Ռոմանոսի և մանզանց իւրոց[126] և Աբդիու մարգ[արէին][127]

ԻԱ Ս[ուր]բ հայրն մերոյ Տիմոթէոսի պատրիարգի[128] և ընկերաց իւր

ԻԲ Ս[ուր]բ հայրն մերոյ Թովմաի պատրիարգի[129]

ԻԳ Ս[ուր]բ քահ[անայ] մարտ[իրոսի] Պաւլիկարպոսի

121 Յունարէն Τήρων բառն է, որ նշանակում է «նորակոչիկ», «երիտասարդ զինուոր»:

122 Լէոն Ա (440-461 թթ.) Հռոմի պապն է, որը յայտնի է իր քրիստոսաբանական գրուածքով՝ «Տօմարով» (Τόμος):

123 Անյայտ սուրբ է:

124 Պարզ չէ, թէ ո՛ր սրբի մասին է խօսքը՝ Ոզիէ մարգարէի՞ (հոկտեմբերի 17), թէ՞ Հոսիոս Կորդոբացու (օգոստոսի 27): Հնարաւոր է նաև, որ սա այլ աղբիւրներից անյայտ մի սուրբ է:

125 Եթէ այս Պափնուտիոսը չի կարող նոյնացուել Եգիպտացի ճգնաւոր և մարտիրոս Պափնուտիոսի հետ (սեպտեմբերի 25 և ապրիլի 19/20-ին, տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 383), ապա թերևս անյայտ մի սուրբ է:

126 Ռոմանոս մարտիրոսն է, որը նահատակուել է մէկ մանկան հետ, և ոչ թէ մեկից աւելի, հետևաբար ճիշտ է «մանկան իւրոյ»: Նրա տօնը նոյեմբերի 18-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 304-305):

127 Աբդիու մարգարէի յիշատակը նոյեմբերի 19-ին է (տե՛ս Μηναιον τοῦ Νοεμβρίου, էջ 316):

128 Խօսքը Տիմոթէոս ճգնաւորի, և ոչ թէ պատրիարքի մասին է: Նոյն օրը Անտիոքի Եւստաթէոս պատրիարքի (Դ դ.), Պոլսոյ Յովհան Գ (565-577 թթ.) և Երուսաղէմի Զաքարիայ (Է դ.) պատրիարքների տօնն է (Μηναίον τοῦ Φεβρουαρίου, էջ 272-273): Ինչպէս երևում է Կոզմայի «Սենաքսառն» այստեղ ևս շփոթ ունի:

129 Պոլսոյ Թովմաս Ա պատրիարքն է (607-610 թթ.), որի տօնը տարբեր աղբիւրներում նշւում է փետրուարի 18/22-ին, մարտի 15/19-ին՝ վերջնականապէս յանգելով մարտի 21-ին (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 204. Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 213):

լիկարպոսի

ԻԴ Գիւտ պատուական գլխոյ Կարապետին

ԻԵ Ս[ուր]բ հայրն Տարասիու և Մարկելիու

ԻԶ Ս[ուր]բ հայրն Պորփիւռոյ

ԻԷ Ս[ր]բոց մարտիւրոսա[ցն] Պապիա եւ ընկ[երացն][130] և ս[ուր]բ առաք[ելոյն] Փիլիպպոսի յևթանասնիցն[131]

ԻԸ Ս[ր]բոյն Խարիտինեա և այլ մարտիւր[ոսացն][132]

Ամիս Մարտիս

Ա Ս[ր]բուհոյն Եւտոկիաաա

Բ Ս[ր]բոյն Աթինոդորոյ[133] և Եւտրոպոյ[134]

Գ Ս[ր]բոց մարտ[իրոսացն] Կլեոնիսկու և ընկ[երացն]

Դ Ս[ուր]բ .խբ. մարտ[իրոսացն][135]

Ե Ս[ուր]բ հայրն Ժեռասիմու որ ի Յորդանան[136]

Զ Ս[ուր]բ մարտ[րիրոսին] Կոնոնի[137]

Է Ս[ուր]բ եպիսկոպ[ոսացն] որ ի Քերսուն՝ Վասիլեոս և այլոց

Ը Ս[ուր]բ հայրն Թէոփիլաքտոսի

130 Հաւանաբար Պապիաս, Դիոդորոս և Կլաւդիանոս մարտիրոսներն են, որոնց յիշատակը հոկտեմբերի 25-ին է կամ փետրուարի 4-ին (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 374):

131 Փիլիպպոս սարկաւագի տօնը հոկտեմբերի 11-ին է (տե՛ռ Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, էջ 149):

132 Խարիտինէ վկայուհու յիշատակն ըստ Ճառընտիրի հոկտեմբերի 5-ին է, այլուր հանդիպում է նաև յունուարի 20 ամսաթիւը (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, էջ 63. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 474):

133 Անյայտ սուրբ է:

134 Այս վկայի և նրա հետ նահատակուած Կլէոնիկոսի և Բասիլիսկոսի տօնը մարտի 3-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 29):

135 Ամորիոնի 42 մարտիրոսներն են, որոնց տօնը մարտի 6-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 58):

136 Ճառընտիրը Գերասիմոս Յորդանանցու յիշատակը տօնում է մարտի 4-ին, սակայն աղբիւրներում կան նաև մարտի 5-ը (Պոլսոյ Յայսմաւուրք) և 20 ամսաթուերը (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου էջ 38. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 89):

137 Սբ. Կոնոնի տօնը մարտի 5-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 46):

Թ Ս[ր]բոց քառասնիցն որ ի Սևաստ

Ժ Ս[ուր]բ հայրն Սոփռոնիու[138]

ԺԱ Ս[ուր]բ քահանայվկայի Պիոնեու և Կոդրատա[139]

ԺԲ Ս[ուր]բ հայրն Թէոփանու Խոստովանողի

ԺԳ Դարձ նշխարաց ս[ուր]բ հայրն Նիկիփաւռա պատրիարգի և սրբոյն Իսայկիու[140]

ԺԴ Ս[ր]բոց մարտ[իրոսացն] Նիկոդիմոյ[141] եւ Խրիստինիսի[142] և Ալեքսանդրու

ԺԵ Ս[ր]բոց .է. մարտ[իրոսացն] Աղապիու և այլոց

ԺԶ Ս[ուր]բ հայրն Եւքսիմոնոյ[143] և Սաւինու մարտ[իրոսին]

ԺԷ Ս[ր]բոյն Ալեքսիու առն Ա[ստուծո]յ

ԺԸ Ս[ուր]բ հայրն Կիւրղի Ե[րուսաղէ]մացւոյ

ԺԹ Ս[ր]բոց մարտ[իրոսին] Խռիսանթոսի և Դարիու[144]

Ի Ս[ուր]բ հայրանցն Մարկոսի[145] և Մաղքոսի[146]

138 Երուսաղէմի պատրիարք Սոփրոնիոսի տօնը մարտի 11-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 116):

139 Կոդրատոս վկայի տօնը մարտի 10-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 106):

140 Անյայտ սուրբ է:

141 Հաւանաբար շփոթուած է Նիկանդրոս մարտիրոսի հետ, որի յիշատակը մարտի 15-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 156):

142 Χριστίνης սեռականը ընկալուել է որպէս ուղղական: Քրիստինէ Պարսիկ վկայուհու տօնը նշւում է մարտի 13-ին, կայ նաև մարտի 14 ամսաթիւը (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 139, Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 474-475):

143 Եւսխիմոն եպիսկոպոսի տօնը մարտի 14-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 148):

144 Տե՛ս հոկտեմբերի 17-ի ծանօթագրութիւնը:

145 Հաւանաբար կիպրացի եպիսկոպոս Մարկոսն է, որի յիշատակը մարտի 29-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 301):

146 Բիւզ. Ծարակնոցում և Յայսմաւուրքներում մարտի 26-ին բերուած է հոգեշահ մի պատմութիւն Մաղքոս վանականի մասին (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 287): Կոզման այս տեղեկութիւնը սխալաբար ընկալել է որպէս սրբի յիշատակութիւն:

ԻԱ Ս[ր]բոց հայրանցն Յակոբա և Յոհաննու[147] և Անանիու[148]

ԻԲ Ս[ուր]բ հայրն Թովմաի[149]

ԻԳ [Սուրբ] հայրն մե[րոյ] Նիկոնոսի և .քճ. աշակերտաց նորա

ԻԴ Նախատաւն է Աւետեաց Ա[ստուա]ծածնին

ԻԶ Ս[ուր]բ հայրն Իսակիոյ[150] և է ժողովումն հրըշտակապետ Գաբրիէլի

ԻԷ Ս[ր]բուհոյն Մատրոնեա

ԻԸ Ս[ուր]բ քահ[անայ]վկ[ային] Վասիլիու[151]

ԻԹ Ս[ր]բոց հայրանցն Յոհաննու և Բարաքիու Ե[րուսաղէ]մա[յ][152]

Լ Ս[ուր]բ հայրն մերոյ Յոհաննու Սանդըխտի[153]

ԼԱ Ս[ր]բոց մարտ[իրոսացն] Մենանդրոսի և Նէոփիտոյ[154]

Ամիս Ապրիէլի

Ա Սրբուհոյն Մարիամա Եգիպտացոյն

Բ Սրբոցն Ամփիանոյ եւ Եդեսիոյ

Գ Սրբոց մարգարէիցն Յեսայիայ, Եզեկիէլի, Զաքարիայ եւ Սամուէլի[155]

147 Միգուցէ Յովհաննէս Գբեցին է, որի յիշատակը մարտի 16/30-ին է (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 234):

148 Այս սրբի մասին եզակի տեղեկութիւն ունի Աթոս Լեռան Մեծ լաւրա վանքի մի ձեռագիր (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 34):

149 Տե՛ս փետրուարի 22-ի ծանոթագրութիւնը:

150 Անյայտ սուրբ է:

151 Վասիլ Անկիւրացու տօնը մարտի 22-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαρτίου, էջ 222):

152 Պարսից վկաներ Յովնանն ու Բարախիսիոսն են, որոնք իրեն այլ վկաների նահատակուել են Դ դ.: Երուսաղէմի հետ նրանց կապելը սխալ է:

153 «Սանդուղք» գրքի հեղինակ (յունարէն ὁ τῆς Κλίμακος») աբբայ Յովհաննէս Սինայեցին է:

154 Անյայտ սուրբ է:

155 Այս մարգարէների համատեղ տօնախմբութիւնը բիւզ. աղբիւրներից յայտնի չէ:



Դ Սրբոյհոյ Իպոմոնիսոյ[156]

Ե Սրբոց մ[ա]րտ[իրո]ս[ա]ցն Թէոդուլոսի և Աղաթոպոսի[157]

Զ Սրբոյն Եւտիքիոյ պատրիարգին

Է Սրբոյն Ռոփիանոյ սարկաւագի և որ ընդ նմ[ա]

Ը Սրբոց առաքելոցն Եպափրոսի[158] և Ռովդիանոյ և ս[ուր]բ Կղեստինոյ Հոռմա

Թ Ս[ուր]բ մարտ[ի]ր[ոսացն] Եփսիքիոյ և Պաւսոլիպոյ[159] և ս[ուր]բ հ[աւ]ր[ն] Պատերմութիոյ և Կոպրիոյ[160]

Ժ Սրբոց մարտիւր[ոսացն] Տերենտիոյ և ընգերաց իւրոց

ԺԱ Ս[ուր]բ ք[ա]հ[անայ] մ[ա]րտ[իրոսին] Անտիպա

ԺԲ Սրբոյն Գերենտիոյ[161], ս[ուր]բ Գորգոյ հայրն և որ ընդ նմ[ա][162]

156 Ὑπομονῆς սեռականը ընկալուել է որպէս ուղղական: Սբ. Իպոմոնիի մասին գիտեն ընդամենը երկու աղբիւր՝ Պոլսոյ Յայսմաւուրքը, որը նրա յիշատակը դնում է ապրիլի 9-ին, և Աթոսի Վատոպեդ վանքի մի մատեան, ըստ որի սրբուհու տօնը ապրիլի 5-ին է (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 457): Կոզմայի «Սենաքսառն» այսպիսով յայտնի երրորդ աղբիւրն է, որ գիտէ այս սրբուհու մասին:

157 Այս մարտիրոսների տօնը Ծարակնոցը նշում է ապրիլի 4-ին, այլուր հանդիպում է նաև ապրիլի 5-ը (տե՛ս Μηναίον τοῦ Ἀπριλίου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αυτῷ ἀκολουθίαν, ἔκδ. τῆς Ἀποστολικῆς Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, (3)2011 (այսուհետ՝ Μηναίον τοῦ Ἀπριλίου, էջ 44. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 179):

158 Եօթանասուն աշակերտներից Եպափրոդիտոսի յիշատակը բիւզ. աղբիւրները նշում են դեկտեմբերի 8-ին և մայիսի 18-ին (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 131):

159 Սբ. Պաւսոլիպոսի յիշատակը ապրիլի 8-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἀπρηλίου, էջ 91):

160 Եգիպտացի ճգնաւորներ և մարտիրոսներ Պատերմութիոսի, Կոպրիսի և Ալեքսանդրի յիշատակը դեկտեմբերի 17-ին և Յուլիսի 9-ին է (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 377):

161 Գերոնտիոս վկայի մասին իմացող երկու աղբիւրներ նրա տօնը նշում են ապրիլի 13/14-ին (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 173):

162 Հաւանաբար Միտիլինէի եպիսկոպոս Գէորգի կամ Պիսիդիայի Անտիոքի եպիսկոպոս Գէորգի մասին է, որոնք երկուսն էլ հալածուել են պատկերամարտների կողմից (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 93):

ԺԳ Ս[ուր]բ մ[ա]րտ[իրոսին] Թէոդոսիոյ և ս[ուր]բ հայրն Մարտինիանէ Հոռմա

ԺԴ Սրբոյն Յակոբայ Անտիոքա հայրապետին և որ ընդ նմա[163]

ԺԵ Ս[ուր]բ մարտ[ի]ր[ոսին] Լէոնիդոս և որ ընդ նմա

ԺԶ Սրբոյհոյն Իռինիսա[164]

ԺԷ Սրբոյն Աղապիոյ պապա Հոռմայ

ԺԸ Սրբոց մ[ա]րտ[ի]ր[ոսա]ցն Յակոբայ և Ազան սարկաւագի[165]

ԺԹ Սրբոյն Տէրէնտիոյ և Նեոնիլաս[166]

Ի Սրբոյն Յունուարէ և որք ընդ նմա[167]

ԻԱ Սրբոյն Ղոնկինու որ ի Սաբրոյ էր և որք ընդ նմ[ա][168]

ԻԲ Սրբոյն Թէոդորոսի եպիսկոպոսի

ԻԳ [Սուր]բ և մեծ մարտիւրոսին Գէորգիոյ

ԻԴ Սրբոյն Սավայի զաւրավարին

ԻԵ Ս[ուր]բ առաքել[ոյն] և աւետարանչին Մ[ա]րկ[ոսի]

ԻԶ Ս[ուր]բ քահ[անայ] վկ[ային] Վասիլիոսի Ամասու եպիսկ[ոպոսի]

163 Անյայտ սուրբ է:

164 Εἰρήνῆς սեռականը ընկալուած է որպէս ուղղական:

165 Պարսիկ մարտիրոսներ Յակոբի քահանայի և Ազա սարկաւագի յիշատակն ըստ Ծարակնոցի ապրիլի 10-ին է, այլուր կան նաև ապրիլի 17/18 ամսաթուերը էջ (տե՛ս Μηναίον τοῦ Απρηλίου, էջ 109-110. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 208):

166 Տերենտիոսի, Նէոնիլլայի և նրանց եօթ զաւակների յիշատակը հոկտեմբերի 28-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, էջ 401):

167 Յունուարիոս եպիսկոպոսի ու նրա հետ նահատակուածների յիշատակն ըստ Ծարակնոցի ապրիլի 21-ին է, այլուր կայ սեպտեմբերի 19 ամսաթիւը (տե՛ս Μηναίον τοῦ Ἀπρηλίου, էջ 215. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 209):

168 Հաւանաբար ապրիլի 24-ին տօնող իրեն մարտիրոսներն են, որոնցից մէկն է Լոնգինոսը (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 150): «Որ ի Սաբրոյ» հատուածը միգուցե «ὁ ἐξ Ισαυρίας»-ի թարգմանութիւն է, թէպէտ աղբիւրները ոչինչ չեն հաղորդում այս վկաների ծագման մասին:

ԻԷ Ս[ուր]բ առաք[ելոյն] Ծմաւոնի[169] ազգականին Տ[եառ]ն և ս[ուր]բ մարտ[իրոսին] Կեեննտիանու և ընկեր[ացն][170]

ԻԸ Ս[ուր]բ առաք[ելոցն] Ասոնի և Սոսկիպատրոյ[171] և ս[ուր]բ մարտ[իրոսին] Ջինոբիու և ընկերաց[172]

ԻԹ Ս[ուր]բ հաւրն մեր Անդրեա Կրետացւոյ[173]

Լ Ս[ուր]բ առաք[ելոյն] Յակոբա եղբաւրն Տ[եառ]ն և Ա[ստուա]ծաբանի Յոհաննու[174]

Ամիս Մախս

Ա Ս[ուր]բ մարգարէին Երեմիաի և յիշատակ ս[ուր]բ և մեծ մարտիւրոսին Եւտոքսիու և ընկեր[աց] որ ի Մելետենի[175]

Բ Ս[ուր]բ հայրանցն Աթանասի[176] և Կիւրղի

Գ Ս[ր]բոյն Պետրոյ և Տիմոթէ

Դ Ս[ուր]բ մարտիւր[ոսին] Ափրոդիսիոյ և որք ընդ նմա բազումք ի Սկիւթիա[177]

Ե Ս[ուր]բ մարտ[իրոսին] Նեոֆիտոյ և ընկեր[ացն]

Զ Արդարոյն Յոբայ և ս[ուր]բ հայրանցն Պախոմիոյ և Ելարիոնի[178]

Է Սրբոյն Մոկիու և որք ընդ նմա[179]

Ը Ս[ուր]բ առաքել[ոյն] և աւետար[անչին] Յոհաննու Ա[ստուա]ծաբանի

Թ Ս[ուր]բ մարգարէին Յեսաեա և ս[ուր]բ մարտ[իրոսին] Խստաֆաւրի[180]

Ժ Ս[ուր]բ առաք[ելոյն] Սիմոնի Նախանձայուզ և Տիմոնի[181]

ԺԱ Վերայիշումն ծննդեան ս[ուր]բ քաղաքին[182] և սրբոյն Մոկիոյ և Պախոմիոյ[183]

ԺԲ Ս[ր]բոյն Եպիփանու Կիպրեացւոյ արհի[եպիսկոպոսի]

---

169 Կոզման այստեղ հետևում է ոչ թէ յունարէնին (Συμεὼν-Սիմէոն), այլ ասորերէնից ազդուած հայերէն աւանդոյթին (Ծմաւոն):

170 Հաւանաբար խօսքը Կենտիրիոնի և նրա հետ նահատակուած չորս այլ վկաների մասին է, որոնց յիշատակը սեպտեմբերի 4-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Σεπτεμβρίου, էջ 83):

171 Յասոն և Սոսիպատրոս առաքեալների յիշատակն ըստ Ծարակնցի ապրիլի 29-ին է, սակայն այլուր կայ նաև ապրիլի 28 ամսաթիւը էջ (տե՛ս Μηναίον τοῦ Ἀπρηλίου, էջ 300. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 209):

172 Բիւզ. աղբիւրները գիտեն միայն եպիսկոպոս Զենոբիոսի և նրա քոյր Զենոբիայի մասին, որոնց յիշատակը հոկտեմբերի 30-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ὀκτωβρίου, էջ 454):

173 Կրետացի հգնաւոր Անդրէասի յիշատակը բիւզ. աղբիւրները նշում են հոկտեմբերի 17/19/20-ին (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον,, էջ 38):

174 Այսինքն՝ «Սենաքսարում» «Տեառն և» բառերն աւելորդ են. սա ոչ թէ Տեառնեղբօր, այլ Յովհաննէս առաքեալի եղբայր Յակոբոս Զեբեդեան առաքեալի տօնն է (տե՛ս Μηναίον τοῦ Απρηλίου, էջ 310):

175 Մելիտենեցի Եւդոքսիոսի, Զենոնի, Ռոմիլոսի և Մակարի տօնը «Սենաքսարը» նշել էր սեպտեմբերի 12-ին:

176 Այս օրը նշում է միայն Աթանաս Ալեքսանդրացու նշխարների տօնը (տե՛ս Μηναίον τοῦ Μαΐου, περιέχον ἅπασαν την ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. της Ἀποστολικῆς διακονίας τῆς Ἐκκλησίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, [(2)]2002 (այսուհետեւ՝ *Μηναίον τοῦ Μαΐου), էջ 21-23):*

177 Պաղեստինի Սկիւթոպոլիս քաղաքն է:

178 Պաքոմ, Հիլարիոն և Մամաս հգնաւորների տօնը աղբիւրներում նշւում է մայիսի 4/6-ին (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 383):

179 Սբ. Մոկիոսի յիշատակը մայիսի 11-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαΐου, էջ 114): «Սենաքսարը» այս սրբի տօնը մեկ անգամ էլ նշում է մայիսի 11-ին:

180 Տե՛ս «Սենաքսարի» նոյեմբերի 9-ի ծանօթագրութիւնը:

181 Տիմոն առաքեալի յիշատակը մնացեալ նախասարկաւագների՝ Պրոքորոսի, Նիկանորի և Պարմենասի հետ մեկտեղ յուլիսի 28-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, περιέχον ἅπασαν την ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. της Ἀποστολικῆς διακονίας τῆς Ἐκκλησίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, [(3)]2011 (այսուհետ՝ Μηναίον τοῦ Ἰουλίου), էջ 368):

182 Կոստանդնուպոլսի դռնբացէքի յիշատակութիւնն է (330 թ. մայիսի 11):

183 Վանականութեան հիմնադիր Պաքոմ Մեծն է, որի յիշատակը մայիսի 15-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαΐου, էջ 154):



ԺԳ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Ալեքսանդրոսի և սրբոյն Ղիկերա

ԺԴ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Իսիդորի

ԺԵ Ս[ուր]բ հաւրն Աղեքսանդրու Ե[րուսա-ղէ]մա[յ] և սրբոյն Թէոդորոսի[184]

ԺԶ Ս[ուր]բ մարգ[արէին] Զաքարիա[185]

ԺԷ Ս[ր]բոյն Սողոնի[186] և Ֆիլետերոյ[187] և ընկ[երացն]

ԺԸ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Թէոդոտոսի որ յԱնկիւրաս և Պետրոսի և Գենեսիոյ[188] և ընկ[երացն]

ԺԹ Ս[ուր]բ հաւրն Պատրիկիոյ

Ի Ս[ուր]բ մարտ[իրոսին] Դալալիու

ԻԱ Ս[ուր]բ թագաւորին Կոստանդիանոսի և մաւրն նորա Հելենեա

ԻԲ Ս[ր]բոյն Վասիլսկոսի

ԻԳ Ս[ուր]բ հաւրն Սիմէոնի որ ի լերինն Սքանչելի էր[189]

ԻԴ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Մելետիոյ[190]

ԻԵ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Թերապոնի[191]

ԻԶ Ս[ուր]բ առաք[ելոյն] Յուդաի[192] և ս[ուր]բ հաւրն Սոզոնի[193]

ԻԷ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Ելլադիոյ

ԻԸ Ս[ր]բոյն Կրիսկենտոյ և Կուտինատոյ[194]

ԻԹ Ս[ր]բուհոյն Թէոդոսիա

Լ Ս[ր]բոյն Եփրէմի և այլ բազում մարտիւր[ոսացն][195]

ԼԱ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Եռմիոյ

Ամիս Յունիս

Ա Ս[ր]բուհոյն Յուստինեա և ընկեր[ացն][196]

Բ Ս[ուր]բ հաւրն մերոյ Նիկիֆաւրա

Գ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Լուկիանու

Դ Ս[ուր]բ հաւրն Մետրոֆանու

Ե Ս[ր]բուհոյն Սեբաստիանէ[197] և յիշատ[ակ] շարժման[198]

Զ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Թէոդորոյ[199]

Է Ս[ուր]բ հաւրն Անթիմու

Ը Ս[ուր]բ և մեծ վկ[ային] Թէոդորոսի յԵւխայտիոյ[200]

Թ Ս[ուր]բ ք[ա]հ[անայ] վկ[ային] Տիմոթեա[201]

---

184 Այս սրբերի տօնը մայիսի 16-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαΐου, էջ 161-162):

185 Զաքարիա մարգարէի տօնը փետրուարի 8-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Φεβρουαρίου, էջ 118):

186 Սոլոխոն վկայի յիշատակը մայիսի 17-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαΐου, էջ 170):

187 Ֆիլետերոս վկայի յիշատակն ըստ Ծարակնցի դեկտեմբերի 30-ին է, սակայն Պոլսոյ Յայսմաւուրքը նշում է մայիսի 19-ին (տե՛ս Μηναίον τοῦ Δεκεμβρίου, էջ 609. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 461):

188 Անյայտ սուրբ է:

189 «Սքանչելի» լեռան (Ասորիք) հգնած Սիմէոն Սիւնակեացի յիշատակը մայիսի 24-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαΐου, էջ 234):

190 Մելետիոսի և նրա հետ նահատակուածների յիշատակը մայիսի 24-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Μαΐου, էջ 235-6):

191 Պարզ չէ, թէ ո՛ր Թերապոնի մասին է խօսքը՝ Կիպրացի՞, թէ՞ Սարդեցի (հմմտ. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 202):

192 Սբ. Յուդա-Թադէոս առաքեալի յիշատակը յունիսի 19-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, περιέχον ἅπασαν την ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. της Ἀποστολικῆς διακονίας τῆς Ἐκκλησίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, [(2)]2002 (այսուհետեւ՝ Μηναίον τοῦ Ἰουνίου), էջ 180-181):

193 Անյայտ սուրբ է:

194 Պէտք է լինի «Կրիսկէս» և «Դիոսկուրիդէս»:

195 Անյայտ սուրբ է:

196 Բ դ. նշանաւոր ջատագով և վկայ Յուստինոս Փիլիսոփան է, որն այստեղ թիւրաբար ներկայացւում է որպէս կին:

197 Սբ. Սեբաստիանէի յիշատակը յունիսի 7-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 71):

198 Բիւզանդական Սինաքսարներում այս օրը երկրաշարժի յիշատակութիւն չկայ:

199 Թէոդոտոս Անկիւրիացի վկայի յիշատակը յունիսի 7-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 69):

200 Թէոդորոս Զօրավարի նշխարների տօնն է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ էջ 79):

201 Տիմոթէոս Պրուսացու յիշատակը յունիսի 10-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 95):

Ժ Ս[ուր]բ առաք[ելոյ]ն Բարթողեմիոսի և Բառնաբա[202]

ԺԱ Ս[ուր]բ հայրն մեր[ոյ] Ոնոփրիոսի որ մերկ[203]

ԺԲ Ս[ր]բուհոյ մարտ[իրոսի]ն Ակիլինիսոյ[204]

ԺԳ Ս[ուր]բ առաքելոյն Փորտոնատեա[205]

ԺԴ Ս[ուր]բ մարգ[արէի]ն Եղիշէի և ս[ուր]բ հայրն Թեոդիու պատրիարխու[206]

ԺԵ Ս[ուր]բ մարգ[արէի]ն Ամովսա և ս[ուր]բ մարտ[իրոսի]ն Դուկա[207] և ընկ[երաց]ն

ԺԶ Ս[ուր]բ հայր մեր[ոյ] Տիքոնոսի Կիպռաւսա հայրապ[ետի]ն

ԺԷ Ս[ուր]բ .գ. մարտ[իրոսաց]ն Մանուիէլի, Սաբէլի և Իսմաէլի

ԺԸ Ս[ուր]բ մարտ[իրոսաց]ն Լեւոնտիոյ և ընկերաց

ԺԹ Ս[ուր]բ հայրն Դիոյ[208] և Մակրինիսի[209] և ս[ուր]բ մարտ[իրոսաց]ն Ասինկրիտու և ընկերաց

Ի Ս[ուր]բ հայրն Ափրիկանոյ[210]

ԻԱ Ս[ուր]բ հայրն Եւսեբիու Սամոսատ հայրապ[ետի]ն[211] և ս[ուր]բ մարտ[իրոսի]ն Յուստոսի և ընկ[երաց]ն[212]

ԻԲ Ս[ր]բուհոյն Մարիամա Մագդաղենացոյն[213]

ԻԳ Ս[ր]բոց մարտ[իրոսաց]ն Զինոնա[214] և Ագրիպինիսա[215]

ԻԴ Ծնունդ Յովաննու Մկրտչին

ԻԵ Ս[ր]բուհոյն Ֆևռոնիա

ԻԶ Ս[ր]բոց մարտ[իրոսաց]ն Թերապոնոսի[216] և Թէոդորոսի[217]

ԻԷ Ս[ուր]բ հայրն Ասփոնա[218] Աւտարասիրի

ԻԸ Դարձ նշխարաց սրբոց անարծաթ բժշկ[աց]ն Կիւրոսի և Յոհաննու

ԻԹ Ս[ուր]բ և գլխաւոր առաք[ելոց]ն Պետրոսի և Պաւղոսի

Լ Ս[ուր]բ երկոտասան առաք[ելոց]ն

Ամիս Յուլիս

Ա Ս[ր]բոց անարծաթ բժշկացն Կուզմայի և Դամիանոսի

Բ Երկրպագութի[ւ]ն պատուական և ս[ուր]բ հանդերձին ս[ուր]բ Ա[ստուա]ծածնին[219]

---

202 Այս առաքեալների տօնը յունիսի 11-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, περιέχον ἅπασαν την ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. της Ἀποστολικής διακονίας τῆς Ἐκκλησίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, $^{(2)}$2002 (այսուհետեւ՝ Μηναίον τοῦ Ἰουνίου), էջ 107):

203 Սբ. Օնուփրիոսի տօնը յունիսի 12-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 118):

204 Ἀκυλίνης սեռականն ընկալուել է որպէս ուղղական: Այս սրբուհու տօնը յունիսի 13-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 127-128):

205 Ֆորտունատոս առաքեալի տօնը յունիսի 15/յունիսի 9-ին է (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 468):

206 Կոզման շփոթել է «Թէոդոս» և «Մեթոդիոս» անունները, որովհետև այս օրը Պոլսոյ Մեթոդիոս պատրիարքի (843-847 թթ.) յիշատակն է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 139):

207 Յունարէնում՝ Δουλᾶς.

208 Դիոս ճգնաւորի յիշատակը յուլիսի 19-ին է, ինչպէս որ դնում է նաև Կոզման իր այս «Սենաքսարում» (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 247): Հնարաւոր է նաև, որ այստեղ պիտի լինէր «Մեթոդիու», և այդ պարագայում յիշատակուող սուրբը Մեթոդիոս Պատարացին է, որի տօնը յունիսի 20-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 189):

209 Բարսեղ Կեսարացու քոյր Մակրինան է, որի յիշատակը յուլիսի 19-ին է (տե՛ս Μηναιον τοῦ Ἰουλίου, էջ 246): Կոզման Μακρίνης սեռականն այստեղ ընկալել է որպէս ուղղական:

210 Անյայտ սուրբ է:

211 Եւսեբիոս Սամոսատցու տօնը յունիսի 22-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 203):

212 Յուստոս և Մատթէոս մարտիրոսների տօնը յուլիսի 21-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 278):

213 Մարիամ Մագդաղենացու տօնը յուլիսի 22-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 288):

214 Սբ. Զենոնի տօնը յունիսի 22-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 204):

215 Ἀγριππίνης սեռականն ընկալուել է որպէս ուղղական:

216 Θεράπωνος սեռականն ընկալուել է որպէս ուղղական:

217 Անյայտ սուրբ է:

218 Պիտի լինի «Սամփսոնայ»:

219 Տօնը նուիրուած է Ե դ. Աստուածամօր հանդերձի՝ Երուսաղէմից Պոլիս բերուելուն և Պոլսոյ Վլախեռնա տաճարում սբ. Տուփի (Ἁγία Σορός) մէջ ամփոփուելուն (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 29-30): Հայոց Եկեղեցում այս տօնը յայտնի է «Գիւտ Տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի» անուանումով:



Գ Ս[ուր]բ մարտ[իրոսի]ն Յակինդոսի

Դ Ս[ուր]բ հայրն մեր Անդրէի Կրետացոյ

Ե Ս[ր]բոց հայրան[ց]ն Ստեփաննու Լամնաթիու[220]

Զ Ս[ուր]բ մ[ա]րտ[իրոսաց]ն Փիլիմոնի և Անթուսա[221]

Է Ս[ր]բոց մարտ[իրոսաց]ն Եւստաթիու և Պաւլիկարպոսի

Ը Ս[ուր]բ և մեծ մարտ[իրոսի]ն Պռոկոպիու

Թ -

Ժ Ս[ր]բոց .խե. մարտ[իրոսաց]ն որ ի Նիկոն[222] քաղաք

ԺԱ Սրբուհոյ մարտ[րիրոսի]ն Եփիմիու լերանց[223]

ԺԲ Ս[ր]բոց մարտ[իրոսաց]ն Պրոկլու և Ելարիոնի և Անդրեա

ԺԳ Ս[ուր]բ առաք[ելոց]ն Ակիղա և Պրիսկիղա[224]

ԺԴ Ս[ուր]բ հայրն Յովսեփա Թեսաղովնիկէ հայրապ[ետի]ն և Յոհաննու[225]

ԺԵ Ս[ր]բոյն Կիրակոսի և մայր նորա Յուլիտեա

ԺԶ Ս[ր]բոց հայր[ապետաց]ն .ոլզ. որ ի Քաղկեդոն[226]

ԺԷ Ս[ր]բոյն Անթինոգինի և ընկ[երաց]ն[227] և սրբուհոյն Մարինեա[228]

ԺԸ Ս[ր]բոյհոյն[229] մարտ[իրոսի]ն Եմելիանու

ԺԹ Ս[ուր]բ հայրն Դիոյ և սրբուհոյն Մարինոսի[230] քեռն ս[ուր]բ Վասլին

Ի Ս[ուր]բ մարգ[արէի]ն Եղիայի

ԻԱ Ս[ուր]բ հայրն Սիմէոնի որ վ[ա]ս[ն] Ք[րիստոս]ի աղաւաշ և Յոհաննու միայնակեցի

ԻԲ Ս[ուր]բ մարտ[իրոսի]ն Ֆաւկասա և ընկերա[ց][231]

---

220 Յուլիսի 5-ին նշւում է Կալաբրիայի Ռիգիոն քաղաքի (Ῥήγιον Καλαβρίας) եպիսկոպոս Ստեփանոսի և Լամպադոս ճգնաւորի յիշատակը (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 64-65): Հաւանաբար, «Լամպադոսը» սխալմամբ վերածուել է «Լամնաթիոսի»:

221 Անթուսա վկայուհու յիշատակը յուլիսի 27-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 358):

222 Νικοπόλεως-ը թարգմանուած է բառացի. Խօսքը Փոքր Հայքի Նիկոպոլիս (այժմ՝ Շապին-Կարահիսար) քաղաքի մասին է:

223 Սբ. Եւփեմիայի մասունքների հետ կապուած հրաշքի յիշատակութիւնն է, որով ըստ աւանդութեան՝ հաստատուել է չորրորդ Տիեզերաժողովի հաւատոյ սահմանը՝ յունարէն ὅρος (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 133-134): Հայ թարգմանիչն այստեղ ὅρος-ը (հո՛ռոս) շփոթել է ὄρος-ի (օ՛ռոս) հետ, որը նշանակում է «լեռ»

224 Այս սրբերի յիշատակը տօնւում է փետրուարի 13-ին, իսկ յուլիսի 14-ին նշւում է Ակիղաս առաքեալի առանձին յիշատակը (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 188. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 23 ):

225 Հաւանաբար Քաղկեդոնի եպիսկոպոս Յովհաննէսն է, որի յիշատակը յուլիսի 18-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 235):

226 Քաղկեդոնի Տիեզերաժողովին մասնակցած 632 հայրապետների տօնն է, որոնց մէջ էին շուրջ երեսուն մասնակիցներ հայկական տարածքներից (տե՛ս Գ. Ղազարեան, *«Հայոց մասնակցութիւնը չորրորդ Տիեզերաժողովին»*, Բանբեր Երեւանի համալսարանի (հայագիտութիւն, հասարակական գիտութիւններ), 2016, № 2 (20), էջ 21-27): Շարակնոցն այս տօնը նշում է յուլիսի 13-ին, իսկ Պոլսոյ Յայսմաւուրքը՝ յուլիսի 16-ին (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 177. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 440):

227 Աթինոգենէսի (Աթանագինէսի) տօնը Շարակնոցը նշում է յուլիսի 16-ին, Պոլսոյ Յայսմաւուրքը՝ յուլիսի 17-ին (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 209. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 17):

228 Սբ. Մարինէի յիշատակը յուլիսի 17-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 223):

229 Եմիլիանոսին այստեղ թիւրաբար ներկայացուած է որպէս կին:

230 Ինչպէս արդէն ասուեց յուլիսի 19-ի առիթով, Բարսեղ Կեսարացու քրոջ անունը Մակրինա է: «Մարինոսը» արական անուն է:

231 Փոկաս Սինոպացու տօնն ըստ Շարակնոցի յուլիսի 23-ին է, իսկ ըստ Պոլսոյ Յայսմաւուրքի՝ յուլիսի 22-ը (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 297. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 469):

ԻԳ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Տոֆիմու և ընկեր[աց][232]

ԻԴ Ս[ր]բուհոյ մարտ[իրոսին] Խրիստինէ-սու[233]

ԻԵ Ս[ր]բուհոյն Աննայի մայրն Ա[ստուա]-ծածնի և սրբուհոյն Եւպրաքսիա

ԻԶ Ս[ուր]բ հայրն Եռմոլաոսի և սրբոյն Սիեոնի (sic) Սիւնակեց[ին][234]

ԻԷ Ս[ուր]բ և մեծ մարտ[իրոսին] Պանտալէ-մոնի որ ասի ամենողորմ

ԻԸ Ս[ր]բոց առաք[ելոցն] Պռախորոնի և Նիկանորա և որք ընդ նոսա և սրբուհոյն Թէոդոսիա[235]

ԻԹ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Կալինիկոսի

Լ Ս[ր]բոց առաք[ելոցն] Շիղա և Սիղուիա-նա[236] և սրբոյն Յոհաննու Զարավա-րի[237]

ԼԱ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Մեղալիսիոյ[238]

Ամիս Աւգաւստոս

Ա Ս[ր]բոց Մակաաբեցւոցն

Բ Բարձ նշխարաց սրբոյն Ստեփաննոսի նախավկ[ային] և .է. մանգանցն որք յԵ-

232 Թէոփիլոս, Տրոֆիմոս վկաների և նրանց հետ նահատակուած 13 մարտիրոսների տօնը Ծարակնոցը տօնում է յուլիսի 21–ին, իսկ Պոլսո՛յ Յայսմաւուրքը՝ յուլիսի 23-ին (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουλίου, էջ 278. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 201):

233 Χριστίνης սեռականն ընկալուել է որպէս ուղղական:

234 Յունաստանի Անապլի (Նաւպլիոն) քաղաքի մոտակայքում ճգնած այս սրբի մասին գիտեն միայն երեք ձեռագրեր (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 439):

235 Թերևս Թէոդոսիա Պոլսեցին է, որի յիշատակը Ծարակնոցը նշում է մայիսի 29-ին, իսկ Պոլսոյ Յայսմաւուրքը՝ յուլիսի 18-ին (տե՛ս Μηναίον τοῦ Μαΐου, էջ 276. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 174):

236 Պիտի լինի «Սիղուանայ»:

237 Յովհաննէս Զինաւորի տօնը Ծարակնոցը նշում է յունիսի 12-ին, այլ աղբիւրներ՝ յուլիսի 30/31-ին (տե՛ս Μηναίον τοῦ Ἰουνίου, էջ 119. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 237):

238 Անյայտ սուրբ է. հաւանաբար աղճատում է վնասուած մի բնագրի, որտեղ յունարէնն ունեցել է «τοῦ ἁγίου μάρτυρος ...μεγάλης ...):

փեսոս[239]

Գ Ս[ր]բոց հայրցն Իսակիոյ, Մաքսիմիու[240] և որք ընդ նոսա

Դ Ս[ր]բուհոյ մարտ[իրոսին] Եւտոկիա-սա[241]

Ե Ս[ուր]բ մարտ[իրոսին] Եւսեղնիու[242]

Զ Փոխակերպութի[ւ]ն[243] Տ[եառ]ն մերոյ Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի

Է Ս[ուր]բ հայրն մեր Դոմետիու

Ը Ս[ուր]բ Եմեղիանու

Թ Ս[ուր]բ առաք[ելոյն] Մատաթիա

Ժ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Լաւրենտիոյ

ԺԱ Ս[ուր]բ մարտ[իրոսին] Եւպլոսի

ԺԲ Ս[ր]բոյն Անակիտոյ

ԺԳ Ս[ուր]բ հայրն Մաքսիմիու

ԺԴ Նախատաւն Ննջման Ա[ստուա]ծածնին և յիշատ[ակ] սրբոյն Մարկելոյ

ԺԵ Ննջումն Ա[ստուա]ծածնին

ԺԶ Ս[ր]բոյն Դիոմիդոսի և յիշատակ շարժման և ընթացմունք այլազգեաց[244]

ԺԷ Ս[ր]բոյն Միռոնի և սրբոց մարտիր[ո-սին] Ստատոնոսի[245] և ընկերացն նորա

ԺԸ Ս[ր]բոյն Ֆլաւոսի և Լաւոսի

ԺԹ Ս[ուր]բ և մեծ մարտ[իրոսին] Անդրեա

239 Եփեսոսի եօթ մանուկների տօնն օգոստոսի 4-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Αὐγούστου, περιέχον ἅπασαν ἀνηκούσαν αυτῳ ἀκολουθίαν, ἔκδ. τῆς Ἀποστολικής Διακονίας τῆς Ἑλλάδος, Ἀθήνα, (3)2009 (այսուհետ՝ Μηναίον τοῦ Αὐγούστου), էջ 59):

240 Անյայտ սուրբ է:

241 Εὐδοξίας սեռականն ընկալուել է որպէս ուղղական:

242 Εὐσίγνιος անուան աղճատումն է:

243 Μεταμόρφωσις-ի բառացի թարգմանութիւնն է: Հայերէնում ընդունուած են «Այլակերպութիւն» և «Պայծառակերպութիւն» տարբերակները:

244 Խօսքը Ը դ. սկզբում արաբների՝ դէպի Պոլիս արշաւանքի և Տիրամօր բարեխօսութեամբ քաղաքի փրկութեան յիշատակութեան մասին է: Նոյն օրը նշւում է նաև 542 թ. Պոլսի մեծ երկրաշարժի տարելիցը (տե՛ս Μηναίον τοῦ Αὐγούστου, էջ 223-224):

245 Στράτωνος սեռականը ընկալուել է որպէս ուղղական:



Զարավարի և ընկեր[աց]

Ի Ս[ուր]բ առաք[ելոյն] Թադէոսի[246]

ԻԱ Ս[ուր]բ մարտ[իրոսացն] Ղուկիու[247] և Բասիսիոյ[248]

ԻԲ Ս[ր]բոյն Աղաթոնիկոսի

ԻԳ Ս[ր]բոյն Իռինոսի[249] և Կալինիկոյ հայր[ապետին] Կոնստանդինուպաւլսոյ

ԻԴ Ս[ր]բոյհոյն Եւֆրաւսինու[250] և Տատիանոյ

ԻԵ Ս[ուր]բ առաք[ելոցն] Տիտոսի և Փիլիմոնի[251]

ԻԶ Ս[ր]բոյն Անդրիանու և Նատալիասա[252]

ԻԷ Ս[ուր]բ հայրն Պիմինի և Մովսէսի[253]

ԻԸ Ս[ր]բոյն տաւն է ս[ուր]բ .ց. միայնակեցացն[254]

ԻԹ Գլխատումն Յովաննու Մկրտչին

Լ Ս[ուր]բ առաք[ելոյն] Անդրեա[255]

246 Թադէոս առաքեալի յիշատակը օգոստոսի 21-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Αὐγούστου, էջ 284):

247 Ղուկիոս մարտիրոսի տօնը Ծարակնոցը տօնում է օգոստոսի 20-ին, իսկ Պոլսոյ Յայսմաւուրքը՝ 22-ին (տե՛ս Μηναίον τοῦ Αὐγούστου, էջ 271. Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 280):

248 Βάσσης սեռականն ընկալուել է որպէս ուղղական:

249 Այս օրը նշւում է Սիրմիոնի եպիսկոպոս Իրինէոսի և նշանաւոր Իրինէոս Լուգդոնացու տօնը (տե՛ս Μηναίον τοῦ Αὐγούστου, էջ 308):

250 Եթէ նոյնական չէ սեպտեմբերի 25-ի սրբուհի Եւֆրոսինէի հետ, ապա անյայտ սուրբ է:

251 Փիլիմոն առաքեալի յիշատակը բիւզ. աղբիւրները դնում են նոյեմբերի 22/23-ին, փետրուարի 19/20-ին (տե՛ս Εὐστρατιάδης, Ἁγιολόγιον, էջ 462):

252 Ναταλίας սեռականն ընկալուել է որպէս ուղղական:

253 Մովսէս Եթովպիացու յիշատակը օգոստոսի 28-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Αὐγούστου, էջ 364):

254 Հաւանաբար շփոթուած են մելիտենեցի վեց նահատակների հետ, որոնց յիշատակն օգոստոսի 30-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Αὐγούστου, էջ 398): Սխալմունքի մասին է վկայում «.ց.» թուականը, որը պիտի լինէր «.զ.»:

255 Անդրէաս առաքեալի յիշատակը նոյեմբերի 30-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Νοεμβρίου, էջ 530):

ԼԱ Երկրպագութի[ւ]ն պատուական գաւտոյ Ա[ստուա]ծածնին և ս[ուր]բ փայտին[256]: Յայսմաւոր սրբոց պատրիարգացն Աղեքսանդրու և Պաւղոսի[257]

*Այսպիսով, Կոզմայի «Սենաքսառի» նախնական քննութիւնը ցոյց է տալիս, որ այն ուշագրաւ յուշարձան է. ունենալով հանդերձ անճշտութիւններ ու սխալներ, այն իւրայատուկ է, քանի որ, կազմուած լինելով բիւզանդական տօնախօսական սկզբնաղբիւրների, նախևառաջ Կոստանդնուպոլսի Տօնացոյցի (Ժ դ.) հիման վրայ, «Սենաքսառը» որոշակիօրէն պահում է կապը տեղական՝ հայկական աւանդոյթի հետ, ինչի մասին են վկայում ոչ միայն լեզուական առանձնայատկութիւնները, այլև սբ. Սահակ Պարթևի, սբ. Մաշտոցի և սբ. Սուքիասեանց յիշատակները: Առանձնապէս հետաքրքրական են այն սրբերի յիշատակները, որոնք կա՛մ չկան բիւզանդական աղբիւրներում, կա՛մ այնքան քիչ են վկայուած, որ «Սենաքսառը» եզակի սկզբնաղբիւրներից մեկն է դառնում:*

256 Պոլսում պահուած Տիրոջ Խաչափայտի երկրպագութեան օրն օգոստոսի 1-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Αὐγούστου, էջ 19):

257 Այս հայրապետների յիշատակը օգոստոսի 30-ին է (տե՛ս Μηναίον τοῦ Αὐγούστου, էջ 397):